

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն.....	4
2. Հավելվածներ	4
3. Օգտագործվող հապավումները	5
4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը	5
5. ՀՀ կառավարության որոշումներ	7
6. Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման հիմքը	9
7. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացի վերաբերյալ	9
8. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.....	10
9. Նախատեսվող գործունեության նպատակը.....	10
10. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը	11
11. Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը	16
11.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ.....	16
11.2 Համայնքի սոցիալական նկարագիրը.....	17
11.3 Սեյսմիկա և երկրաբանություն	18
11.4 Կլիմա և օդային ավազան.....	19
11.5 Հողային ռեսուրսներ.....	21
11.6 Ջրային ռեսուրսներ	22
11.7 Բուսական և կենդանական աշխարհ	26
11.8 Հատուկ պահպանվող տարածքներ	31
11.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	32
12. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները	34
12.1 տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները	34
12.2 Տարածքի կառուցապատում	35
12.3 Էլեկտրամատակարարում	38
12.4 Ջերմամատակարարում.....	38
12.5 Ջրամատակարարում. Ջրահեռացում.....	38
12.6 Աղբահանություն.....	39
12.7 Լողափի կահավորում.....	39
12.8 Կանաչապատում, բարեկարգում	40
12.9 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր	40
12.10 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ.....	42
13. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բնութագրերը	45

13.1 Օդային ավազան.....	45
13.2 Հողային ռեսուրսներ.....	45
13.3 Ջրային ռեսուրսներ	46
13.4 Կեղտաջրերի հեռացում.....	46
13.5 Կենսաբազմազանություն	48
13.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	48
13.7 Թափոններ.....	49
13.8 Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն	50
13.9 Սոցիալական	50
13.10 Բարեկարգում և կանաչապատում	50
14.Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական(կառավարման) միջոցառումների ծրագիրը	51
14.1 Օդային ավազան.....	52
14.2 Հողային ռեսուրսներ.....	52
14.3 Ջրային ռեսուրսներ	53
14.4 Կենսաբազմազանություն	54
14.5 Թափոններ.....	54
14.6 Աղմուկ և թրթռում	55
14.7 Արտակարգ իրավիճակներ.....	55
14.8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.....	55
14.9 Սոցիալական	56
14.10 Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում.....	57
Կանաչապատում.....	57
14.11 Մոնիթորինգ	57
15. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան	59
16.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ.....	70
Գրականություն.....	73
Հավելվածներ	74

1. Ընդհանուր տեղեկատվություն

Չայտ	«ՍԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ տարածքում Ծովագարդ գյուղի լճափնյա 12/3 հասցեում մեկ հարկանի վեց շարժական քոթեջների էսքիզային նախագիծ
Ձեռնարկող	Ռուբեն Մովսիսյան /լիազորված անձ Տիգրան Ասլանյան/
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	ՀՀ Արարատի մարզ գյուղ Այգեգարդ, Չկալովի փողոց, տուն 23/1
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝	«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ՝ Ծովագարդ գյուղ լճափնյա 12/3
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	Gevorg Shahinyan <gev-shahinyan@mail.ru>
Պատվիրատու	Ռուբեն Մովսիսյան
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ՝ Ծովագարդ գյուղ լճափնյա 12/3 հասցե:
Նախագծող	Գևորգ Շահինյան
Գնահատման հայտի նախագծող	«Նովալ»ՍՊԸ
Չայտի նախագծող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Զ. Երևան, Բրյուսովի 6 Հեռ.(012)21-10-01, (093)39-77-60 noval-llc@outlook.com

2. Հավելվածներ

- Հավելված 1.** Լիազորագիր
- Հավելված 2.** Տարածքի վարձակալության պայմանագիր
- Հավելված 3.** Կադաստրի վկայանական
- Հավելված 4.** Ճարտարապետա-հատակագծային առաջադրանք
- Հավելված 5.** Սևան ազգային պարկի և նրա պահպանական գոտու տարածքում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ
- Հավելված 6.** <<Վեոլիա ջուր>>ՓԲԸ-ի տեխնիկական պայմանը
- Հավելված 7.** Տարածքի հատակագիծ
- Հավելված 8.** Համայնքի նախնական համաձայնությունը, աղբահանություն
- Հավելված 9.** Կանաչապատման ծրագիր
- Հավելված 10.** Հանրային քննարկման արձանագրություն, տեսաձայնագրություն մասնակիցների ցանկը
- Հավելված 11.** WGS-84 (ARMREF 02) կոորդինատային տվյալները
- Հավելված 12.** Առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթեթը

3. Օգտագործվող հապավումները

ՇՄ նախարարություն՝ շրջակա միջավայրի նախարարություն
ՇՄԱԳ՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ԲՀՊՏ՝ Բնության հատուկ պահպանվող տարածք
ՄՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՊՈԱԿ՝ Պետական ոչ առևտրային կազմակերպություն
Սևան ԱՊ՝ «Սևան» ազգային պարկ

4. Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

4.1 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014) (այսուհետ Օրենք/-կարգավորում է հիմնադրությամբ փաստաթղթերի(ՇՄԱՌԳ) և նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատումները(ՇՄԱԳ): Կարգավորում է նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի և շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Համաձայն օրենքի լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացում է հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության փորձաքննություն, տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

4.2 «Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)- սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

4.3 «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)-սահմանում և կարգավորում է իրավական և քաղաքականության հիմքերը ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար, կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները:

4.4 ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.)- սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպական իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և

բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

4.5 «Բուսական աշխարհի մասին» (1999) ՀՀ օրենք-նպատակը բուսական աշխարհի, կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Կարգավորում է ՀՀ բույսերի պահպանության պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է նաև Էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

4.6 «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)–նպատակը կենդանական աշխարհի պահպանության ապահովումն է: Կարգավորում է կենդանական աշխարհի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է Էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

4.7 «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը-(15.05.2001թ.)- կարգավորում է Սևանա լճի, նրա ջրհավաք ավազանի և տնտեսական գործունեության գոտու Էկոհամակարգերի պահպանման, վերականգնման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման հետ կապված հարաբերությունները: Սահմանում է Սևանա լճի, որպես Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի՝ բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, կլիմայական, ռեկրեացիոն (վերականգնողական) և հոգևոր արժեք ունեցող ռազմավարական նշանակության Էկոհամակարգի բնականոն զարգացման, վերականգնման, բնական պաշարների վերարտադրման, պահպանման և դրանց օգտագործման պետական քաղաքականության իրավական ու տնտեսական հիմունքները:

4.8 «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

4.9 «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենք (2006) և «Հայաստանի հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին(21.12.2015թ.) ՀՀ օրենք-կարգավորում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի սահմանման և իրականացման հետ կապված հարաբերությունները, ընդգրկելով ազգային ջրային

պաշարի, ռազմավարական ջրային պաշարի, օգտագործելի ջրային ռեսուրսների գնահատականները, ջրերի նկատմամբ առաջարկը և պահանջարկը, ջրային բնագավառի պահպանման և զարգացման հիմնական խնդիրները և հեռանկարները, ելնելով ջրի սահմանափակ լինելու, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի պահպանման համար հիմնական միջոցներից մեկը հանդիսանալու, դրա մատչելիության ապահովման նախապայմաններից:

4.10 «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենք (2005) - նպատակը մարդու բարեկեցության, հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման, տնտեսական և էկոլոգիական կարիքները բավարարելու համար անհրաժեշտ քանակի, ռեժիմի և որակի ջրային ռեսուրսների մատչելիության ապահովումն է: Սահմանում է ջրային ռեսուրսների կայուն կառավարման, օգտագործման և պահպանության գերակայությունները, ջրային ռեսուրսի հաշվառումը և գնահատումը, առաջարկի և պահանջարկի ձևավորումը, ջրավազանային կառավարման հետ կապված հարաբերությունները:

4.11 «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (1994թ.հոկտեմբերի 11, ՀՕ-121):

5. ՀՀ կառավարության որոշումներ

5.1 «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները - սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

5.2 «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը-սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

5.3 «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» 2007թ. մարտի 15-ի N385-Ն որոշում - Ներառում է Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:

5.4 «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում – Սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:

5.5 «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ. N1059-Ա որոշում – Հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում

պետական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

5.6 «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարությանը եվ գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 10.12.2015թ. նիստի N54 և «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 27.05.2015 նիստի N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

5.7 ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ:

5.8 ՀՀ կառավարության 2008թ.դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշում «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԶԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ:

5.9 ՀՀ կառավարության 2002թ.թիվ 57 որոշում ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՅԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ԿԵՆՍԱԾԻՆ ՏԱՐՐԵՐԻ, ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐԻ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

5.10 «Սևան» ազգային պարկի կանոնադրություն», ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշում:

5.11 «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N205-Ն որոշում:

5.12 մայիսի 2004 թվականի N 766-Ն «ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ 1908.0 ՄԵՏՐ ԲԱՑԱՐՁԱԿ ՆԻՇԻՑ ՑԱԾՐ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N 927-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

5.13 ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում՝ «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» :

5.14 Շրջակա միջավայրի նախարարի 2003թ. դեկտեմբերի 10-ի «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաքանակների հաշվարկի մեթոդիկան հաստատելու համար» N 464-Ն հրաման:-

5.15 Շրջակա միջավայրի նախարարի 2020թ. սեպտեմբերի 9-ի «Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» N 335-Ն հրաման:

5.16 22 ապրիլի 1999 թվականի N 259 Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կանոնադրությունը հաստատելու մասին:

6. Նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի մշակման հիմքը

Նախնական գնահատման հայտը մշակվել է Լիազորագրի (Հավելված 1), 03.08.2020թ.-ի Կառուցապատման իրավունքի առ ու վաճառքի պայմանագրի(Հավելված. 2), Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի` (Հավելված. 3), ՀՀ Գեոարքոնիքի մարզի Ծովագարդ համայնքի կողմից տրամադրված նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի (Հավելված. 4) և նախագծային փաստաթղթերին համապատասխան:

7. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացի վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է` «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ` Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են 21.06.2014թ.-ին ընդունված «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

Համաձայն Օրենքի, գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների` Ա, Բ և Գ: «Հանգստի գոտու կառուցապատման նախատեսվող գործունեությունը համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 8-րդ կետի համարվում է թվարկված գործունեություն, ներառված է Գ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության ենթակա է Գ կատեգորիայի ընթացակարգով, այս դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ենթակա նախնական գնահատման հայտը:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի փորձաքննության ներկայացվող նախնական գնահատման հայտը պարունակում է՝

1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը.

3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման.

4) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը.

6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լուծումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվել են ՀՀ կառավարության 1325-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան՝ Գեղարքունիքի մարզի, Ծովազարդ համայնքում, որի վերաբերյալ համայնքը տվել է դրական կարծիք:

8. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը.

«Սևան» ԱՊ-ի տարածքում հանգստի գոտու կազմակերպումն իրականացնում է Ռուբեն Մովսիսյանը, որի լիազորված անձը հանդիսանում է Տիգրան Ասլանյանը իրավաբանական հասցեն է ՀՀ Արարատի մարզ գյուղ Այգեզարդ, Չկալովի փողոց տուն 23/1:

9. Նախատեսվող գործունեության նպատակը.

«Սևան» ազգային պարկի տարածքում հանգստի գոտու կազմակերպման նպատակն է կառուցել հանգստի գոտի՝ համապատասխան ենթակառուցվածքներով և պայմաններով, բնակչության երկարաժամկետ և կարճաժամկետ հանգիստն անցկացնելու համար:

Տարածքի ճարտարապետական լուծումները՝ դիրքը և վայրը, հնարավորություն կստեղծեն, թե զբոսաշրջիկներին և թե տեղացիներին իրենց հանգիստը կազմակերպել բնության գրկում, գեղատեսիլ Սևանա լճի ափին:

«Սևան» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ» ՊՈԱԿ-ի կանոնադրության համաձայն՝ կազմակերպությունն ռեկրեացիայի նպատակով իր տարածքում՝ հողերը սահմանված կարգով մինչև 07. 09. 2032թ. 0,48 հա, վարձակալությամբ տրամադրել է Ռուբեն Մովսիսյանին, տարածքում քաղաքացիների հանգիստը կազմակերպելու և Էկոտուրիզմի զարգացման համար:

10. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սևանա լճի ափամերձ տարածքում, Սևան ազգային պարկում, տեղակայված է Գեղարքունիքի մարզ, Ծովագարդ համայնքի վարչական սահմանում: Տարածքը Սևան քաղաքից ուղիղ գծով գտնվում է 10 կմ հեռավորության վրա:

Գեղարքունիքի մարզի Ծովագարդ գյուղը գտնվում է Սևանա լճի (փոքր Սևան) հյուսիս-արևմտյան ափին՝ ծովի մակերևույթից 1900-2000 մետր բարձրության վրա: Համայնքից վերև ձգվում է Գեղամա լեռնաշղթան, իր բարձրադիր գագաթներով և լանջերով: Ռելիեֆը անհարթ բլրային է՝ ափսեածն իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնածն իջվածքներով:

Տարիների ընթացքում գործունեության ենթակա տարածքի այս հատվածը օգտագործվել է որպես լողափ: Տարածքի բուսական աշխարհը ներկայացված է անկանոն տեղ տեղ աճած տարախոտային բուսատեսակներով, հիմնական մասը ավազային ծածկ է և ժայռային, քարքարոտ ափ: Տարածքի հողաբուսաշերտի հզորությունը 15-18սմ է: Տարիների ընթացքում, մարդածին գործունեության արդյունքում Կարմիր գրքյան բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչները բացակայում են:

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը 4800.0 քառ.մ է, որը տեղակայված է Ծովագարդ տարածքային հատվածում, Մարտունի- Սևան մայրուղու հարակից տարածքում: Տարածքի հիմնական մասը՝ մոտ 95 % գտնվում է 1905 նիշից ցածր, մնացած մասը՝ 1905 նիշից բարձր է:

Համաձայն ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԴՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻՎՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ՝ տարածքը տեղակայված է «Ծովագարդ» տարածքային հատվածում, որն ունի ոչ հարթ ռելիեֆ և կտրտված ափի գիծ: Ջուրը տեղ-տեղ (400մ մեկ հատվածում և 400մ այլ հատվածում) հասնում է Մ-10 ճանապարհին (1905.0մ): Համաձայն նույն որոշման՝ այս հատվածում ևս նախատեսվում է տեղափոխել ճանապարհը՝ անցկացնելով այն ավելի բարձրադիր տեղամասերով: Մ-10 ճանապարհին իր հին ծրագծով (ոչ ջրածածկվող հատվածներով) կօգտագործվի որպես ռեկրեացիոն գոտին սպասարկող ճանապարհ:

Նկատի ունենալով, որ տվյալ հատվածում ճանապարհի նիշը մոտ 3մ բարձր է հողամասի նիշից ուստի հնարավոր չէ իրականացնել մուտք ու ելք 12/3 հողամասի հատվածից: Նախատեսված է հողամասի տարածք մուտքն ու ելքը իրականացնել իր սեփականություն հաղիսացող հարևան հողատարածքից:

Համաձայն ՀՀ կառավարության որոշման՝ տարածքային հատվածը բարենպաստ է սեյսմիկայի, կլիմայի, ռելիեֆի տեսանկյունից: Այն գոտևորվել է 1 և 2-3 հարկանի կառուցապատման հատվածների (հյուրանոցային ժամանցային օբյեկտներով կառուցապատման հատվածների, հասարակական սպասարկման և սննդի, ինչպես նաև սպորտի օբյեկտներով կառուցապատման հատվածների համար:

Կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է «Սևան» Ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտում՝ Մարտունի-Սևան մայրուղու հարակից տարածքում: Մայրուղուց(Մ-10) հանգստյան գոտու հեռավորությունը կազմում է 45մ, Սևան քաղաքից(ուղիղ գծով)՝ 10կմ, Գավառ քաղաքից(ուղիղ գծով)՝ 13կմ: Կառուցապատման հեռավորությունը Սևանա լճից ուղղահայաց՝ 13-13,5մ է: Գործունեության տարածքին ամենամոտ հատուկ պահպանվող տարածքը Նորաշենի արգելոցն, որը գտնվում է 1,5 կմ հեռավորության վրա՝ ուղիղ գծով: Նախատեսվող գործունեության համար ընտրված տարածքը կից է Սևանա լճի առափնյա այլ հանգստյան գոտիներին: Անմիջապես կից գտնվում է այլ հանգստյան գոտի՝ (Ծովագարդ համայնք հ. Լճափնյա 12/1), Սևանա լիճը: Նախատեսվող գործունեության տարածքում շենք, շինությունները, ծառաթփային բուսականությունը

Գործունեության ենթակա տարածքի իրավիճակային պատկերը:

Նկար 1



Իրադրության սխեմա






Իրադրության սխեմա





Իրադրության սխեմա



Ամբողջ տարածքը գտնվում է «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում: ՀՀ կառավարության 177 որոշմամբ հաստատված «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտիավորման նախագծով» կատարվել է ռեկրեացիոն տարածքի հստակ գոտևորում: Համաձայն նույն որոշման 5-րդ մասի 5-1 աղյուսակի ռեկրեացիոն գոտու տարածքը տեղակայված է 1903,5 նիշում:

Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա:

Սևանա լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր: Այն մի բնատարածքային համալիր է, որն իրենից ներկայացնում է բնության տարբեր տարրերի սերտ փոխկապակցվածություն, ինչպես նաև ունի կլիմայագոյացնող կարևոր նշանակություն ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով:

«Սևան» ազգային պարկը ստեղծվել է ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի «Սևան» ազգային պարկ ստեղծելու մասին» N 125 որոշմամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N927-Ն որոշմամբ «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպվել է համանուն պետական ոչ առևտրային կազմակերպության, հաստատվել են պարկի և կազմակերպության կանոնադրությունները, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1185-Ն որոշմամբ ստեղծվել է «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհուրդը, ամրագրվել վերջինիս գործառույթների շրջանակը, կազմն ու գործունեության կարգը:

«Սևան» ազգային պարկի» (այսուհետև՝ պարկ) գործունեության նպատակը՝ պարկի տարածքի բնական Էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության հաշվառման, գույքագրման, մոնիթորինգի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է:

Պարկը հանրապետական նշանակության՝ բնության հատուկ պահպանվող տարածք է: Պարկի հողերը հատուկ պահպանվող տարածքի հողեր են, որոնք ներառում են բնապահպանական, պատմական ու մշակութային և այլ նշանակության հողեր, որոնց վրա օրենքով սահմանված կարգով արգելվում է պարկի նպատակներին հակասող գործունեություն: Պարկի սահմաններում վարձակալության կամ կառուցապատման իրավունք ունեցող հողօգտագործողները, հողամասերի վրա կառուցված շենքերն ու կառույցները պետք է օգտագործվեն իրենց նշանակությամբ համապատասխան՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Համաձայն կառավարման պլանի՝ «Սևան» ազգային պարկի տարածքը Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147 456 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22 697 հա:

2010 թվականի հունվարի 1-ի դրությամբ «Սևան»ԱՊ-ի տարածքը կազմում է 22584.25 հա:

Ռեկրեացիոն գոտու ընդհանուր մակերեսը 4 753 հա է, որն ընդգրկում է միայն ցամաքային տարածքը: Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության՝ պարկի ռեկրեացիոն գոտու տարածքներում թույլատրվում են զբոսաշրջիկների և այցելուների սպասարկման ծառայությունների կազմակերպումը, ինչպես նաև 1905 նիշից բարձր տարածքներում կապիտալ և ոչ հիմնական կառուցապատումը՝ քաղաքաշինական նորմերի և սահմանափակումներին համապատասխան:

Չնայած քամիների հյուսիս-արևելյան ուղղվածությանը, դրանց ազդեցությունը շատ չէ, քանի որ անցնելով Գեղամա լեռնաշղթայով, քամու ուժգնությունը կտրվում է: Լանջերի թեքությունները և ուղղվածությունը բարենպաստ են կառուցապատման համար: Գրունտների արագացումը 0.5-06 g:

11.Նախատեսվող գործունեության տարածաշրջանի շրջակա միջավայրի նկարագիրը

11.1 Աշխարհագրական դիրքը, ռելիեֆ

Հանգստյան գոտին նախատեսվում է իրականացնել Գեղարքունիքի մարզի Ծովազարդ համայնքի լճափային հատվածում: Սևանի ավազանի արևմտյան և հյուսիս-արևմտյան ափամերձ տարածքներին բնորոշ են հրաբխային կառուցվածքով ռելիեֆը՝ մինչև լիճը ձգվող ծովախորշերով, հրվանդաններով, քարաբեկորներով: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելեկսիկային նստվածքներից:

Տարածաշրջանը բնութագրվում է կտրուկ կտրտված բլրային ռելիեֆով, խորը ձորակներով: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ռելիեֆի ստրուկտուրային դենուդացիոն և էռոզիոն դենուդացիոն տիպերը, միջին Էոցենի

հասակի ապարները՝ անդեզիտա-բազալտները՝ ծածկված չորրորդական հասակի փուխր բեկորային ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքներով:

Ռելիեֆը անհարթ բլրային է՝ ափսեածև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Մակերևույթի ընդհանուր թեքությունը հարավ-արևելյան ուղղությամբ է:

Համաձայն Ծովագարդ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի (Ծովագարդ համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 23-ի՝ թիվ 20 որոշում)՝ Գեղարքունիքի մարզի Ծովագարդ գյուղը գտնվում է Սևանա լճի(փոքր Սևան) հյուսիս-արևմտյան ափին՝ ծովի մակերևույթից 2000 մետր բարձրության վրա: Համայնքից վերև ձգվում է Գեղամա լեռնաշղթան, իր բարձրադիր գագաթներով և լանջերով:

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N 177-Ն որոշման հավելվածի՝ «Ծովագարդ» տարածքային հատվածը ունի Չկալովկայի նման ռելիեֆ և կտրտված ափի գիծ: Գոտևորվել է 1 և 2-3 հարկանի կառուցապատման հատվածների /հյուրանոցային/, ժամանցային օբյեկտներով կառուցապատման հատվածների, հասարակական սպասարկման և սննդի, ինչպես նաև սպորտի օբյեկտներով կառուցապատման հատվածների:

Նորաշենի արգելոցի շարունակության վրա գտնվող հատվածը առանձնացվել է որպես բնական լանդշաֆտի պահպանման գոտի (ԲԼՊԳ):

Տարածքային հատվածը բարենպաստ է սեյսմիկայի, կլիմայի, ռելիեֆի տեսանկյունից:

11.2 Համայնքի սոցիալական նկարագիրը

Համաձայն ՀՀ Գեղարքունիք մարզի 2017-2021թթ. Ծովագարդ համայնքի զարգացման ծրագրի՝ Ծովագարդ համայնքը գտնվում է մարզկենտրոն Գավառից հյուսիս-արևմուտք 20կմ, իսկ մայրաքաղաք Երևանից՝ 80 կմ հեռավորության վրա: Համայնքի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն համայնքի կենտրոնական մասում գտնվող V-VII դարերին պատկանող եկեղեցու ավերված հիմքը վկայում է Ծովագարդի վաղ դարերից գոյություն ունենալու մասին:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 3941.14հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 2002.56հա, բնակելի տարածքը՝ 399.11հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման 16.59հա, բնապահպանական, հանգստի և պատմամշակույթային հողեր՝ 222.44հա, պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 1300.44 հա:

Ծովագարդ համայնքի հողերը համարվում են անջրդի վարելահողեր: Համայնքում արոտավայրերը հիմնականում հեռագնա են:

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց և 1 նախադպրոցական հիմնարկություն, բուժ կետ, որը գտնվում է բարվոք վիճակում և սպասարկում է համայնքի բնակչության միևնույն բժշկական պահանջները: Համայնքն ամբողջովին զագաֆիկացված է, ունի ջրամատակարարման համակարգ, իսկ կոյուղու և ոռոգման համակարգերը նախատեսվում են կառուցել: Համայնքում աղբահանությունը կատարվում է շաբաթը մեկ անգամ: Ազգաբնակչությունից աղբահանության վճար չի գանձվում: Ունի մասնակի փակ կարգավիճակ ունեցող 2 գերեզմանատուն, նախատեսվում է հողհատկացում N 2 գերեզմանատան համար: Դաշտամիջյան ճանապարհները գտնվում են ոչ բարվոք վիճակում: Համայնքի բնակչությունը 2016 թ.

հունվարի 1-ի դրությամբ կազմում է 2202 մարդ: Համայնքի բնակչության 53.32% կազմում են տղամարդիկ, կանայք՝ 46.68%: Համայնքում հիմնախնդիր է գործազրկության բարձր մակարդակը, սոցիալապես անապահով և ծայրահեղ աղքատ բնակչության բարձր տոկոսը, ցածր աշխատավարձի առակայությունը:

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Աշխատունակ տղամարդկանց մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

Համայնքի բնակիչները հիմնականում զբաղված են գյուղատնտեսությամբ՝ անասնապահությամբ, դաշտավարությամբ, կերային մշակաբույսերի և կարտոֆիլի մշակությամբ: Բնակչությունը մասնակիորեն զբաղված է խեցգետնի վերամշակման, զովացուցիչ ըմպելիքների արտադրության ոլորտներում: համայնքում արտադրվող հիմնական գյուղատնտեսական արտադրանքներն են բուսաբուծության ճյուղում հացահատիկը կարտոֆիլ և բանջարեղենը, իսկ անասնապահության ճյուղում՝ միսը, կաթը, պանիրը, բուրդը և մեղրը: Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական մասը սպառվում է տեղի շուկաներում, իսկ կաթը հիմնականում մթերվում է «Մարիանա» կաթի վերամշակման գործարանում:

Համաձայն Ծովագարդ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի /Ծովագարդ համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 23-ի՝ թիվ 20 որոշում/ համայնքում նախատեսվում է կառուցել մարզական կառույցներ, հրապարակներ, կատարել կենտրոնական ճանապարհի հիմնանորոգում, ստեղծել նոր հանգստի գոտիներ, ավելացնել կանաչապատ և ծաղկապատ տարածքներ, փողոցներում իրականացնել ծառատունկ, բարեկարգել հուշահամալիրների տարածքները:

Համայնքի նպաստավոր դիրքը, գեղատեսիլ բնությունը, առկա պատմամշակույթային հուշարձանները՝ եկեղեցիներ, բազմաթիվ խաչքարեր, ինչպես նաև համայնքում ռեկրեացիոն ռեսուրսների առկայությունը՝ Սևանա լճի ափին գտնվելը նպաստավոր են համայնքում սպորտի, հանգստի, զբոսաշրջության զարգացման համար:

11.3 Սեյսմիկա և երկրաբանություն

Համաձայն 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերում» ներառված և ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի հաստատված քարտեզի՝ տեղազննվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ:

Սևանի լեռնաշղթայի կտրվածքում մեծ տարածում ունեն տուֆոկոնգլոմերատները, տուֆոբրեկչիաները, պորֆիրիտները և դրանք հատող ինտրուզիաները: Բարձրադիր լանջերը և ջրբաժանները ներկայացված են մերգելներով և կրաքարերով, որոնք աններդաշնակ կերպով տարածված են հրաբխա-նստվածքային կոմպլեքսի վրա:

Գեղամա լեռնաշղթայի արևելյան լանջերի նախալեռնային մասերում մինչև ափամերձ տարածքները զգալի տարածում ունեն նստվածքային առաջացումները՝ կավերը, մերգելները և ավազաքարերը: Վերջիններս ծածկված են տուֆոբրեկչիաների, կոնգլոմերատների և միջֆորմացիոն լավաների հոսքերի հաստաշերտերով: Տարածաշրջանի ստորգետնյա ջրերը հիմնականում կապված են վերին կավճի հասակի կրաքարերի և ուլտրահիմքային ու հիմքային ապարների կոնտակտի հետ, որոնք բնական աղբյուրների տեսքով դուրս են գալիս երկրի

մակերես: Ջրամերժ շերտերը հանդիսանում են ուլտրահիմքային ապարների կոտրատված մասսան (մագնետիզացված և սերպենտինիտիզացված դոլոմիտները ու սերպենտինիտները), որոնք վերածվել են կավանման առաջացումների: Ապարները պրոյուվիալ, դեյուվիալ առաջացումներ են, որոնց հետ կապված գրունտային ջրերը սեզոնային հոսքերի տեսքով դուրս են գալիս գետերի միջին և վերին հոսանքներում: Դեպի Սևանա լիճ կուտակված առաջացումները ներկայացված են՝ ավազաքարերով, կավերով, տուֆոավազաքարերով, գլաքարա-կոնգլոմերատային, լճային գոյացումներով՝ ճալաքարերի ջրատար շերտերով: Ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը:

Երկրաբանա-գեոմորֆոլոգիական տեսակետից Սևանա լճի հյուսիս-արևմտյան հատվածն իրենից ներկայացնում է փոքր խորդուբորդություններով պլատո, լցված լավաների բեկորներով և քարակտորներով (չինգիլներով), տեղ-տեղ ծածկված էյուվիալ-դեյուվիալ և այլուվիալ առաջացումների ծածկոցով:

Ծովազարդ գյուղական համայնքի երկրաբանական կառուցվածքին բնորոշ են անդեզիտա-բազալտային լավային հոսքերը և վերին - չորրորդական հասակի այլուվիալ-պրոյուվիալային գոյացումները:

11.4 Կլիմա և օդային ավազան

Տարածաշրջանի կլիման չորային է: Ձմռանը գերիշխում է պարզ արևոտ թույլ սառնամանիքներով եղանակը (15-17 օր ամսվա ընթացքում), ձմռանը չափավոր ցուրտ է: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության: Սևանա լճի ջրհավաք ավազանում կլիմայի ձևավորման հիմնական գործոններն են արևի ճառագայթումը և մթնոլորտային շրջապտույտը: Արևային ժամերի քանակը տարեկան տատանվում է 2600-2800-ի միջև: Սևանա լճի կենտրոնական գոտու տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենաանսպաստ կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին, որտեղ օդի ջերմաստիճանի կարող է իջնել մինչև -36°C :

Զամիների միջին տարեկան արագությունը տատանվում է 1.5-6.0 մ/վրկ: Ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին:

Տարածաշրջանում մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 600մմ, իսկ համաձայն ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի տրամադրած տեղեկատվության՝ տեղումների միջին բազմամյա տարեկան քանակությունը Սևան քաղաքում կազմում է 583մմ, իսկ Սևանա լճում՝ 484մմ: Տեղումների մի մասը ներծծվելով ապարների շերտերով ու ծակոտիկներով, բեռնաթափում են սեզոնային բնույթի աղբյուրների տեսքով, իսկ մյուսը ժամանակավոր հոսքերի տեսքով հոսում են դեպի Սևանա լիճ:

Մարզի օդային ավազանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Մարզում չկան արտադրական ձեռնարկություններ, հիմնականում ավտոտրանսպորտի արտանետումներն են: Տարածքի հաշվարկով այս օդային ավազան արտանետումների մակարդակը քիչ է հանրապետության միջինից շուրջ 6.3 անգամ: Օդային ավազանում հայտնաբերված փոշու քանակությամբ մարզը գտնվում է բարվոք վիճակում, այս ցուցանիշը միջին հանրապետական մեկ շնչի հաշվով ցուցանիշից փոքր է շուրջ 3 անգամ:

Ծովազարդի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտ տարիները, որից շատ է տուժում գյուղատնտեսությունը: Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Օդի ջերմաստիճանը, °C

Աղյուսակ 1

Բնակավայրի անվանումը	Բարձրունքը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ ցածր	Բացարձակ բարձր
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Սևան ք.	1937	-8,2	-7,4	-3,3	3,5	8,8	12,1	15,7	15,7	12,2	6,4	0,6	-5,5	4,2	-33	32

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա
Սևան ք.	81	80	77	72	73	72	70	68	65	69	76	82	74	75	53

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Աղյուսակ 3

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մի օրական առավելագույնը			Ձյան ծածկույթը		
	ըստ ամիսների					

	I	II	III	IV	V	VI	VI I	V III	IX	X	XI	XII	տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
ք. Սևան	$\frac{25}{21}$	$\frac{30}{26}$	$\frac{40}{26}$	$\frac{65}{52}$	$\frac{103}{46}$	$\frac{79}{45}$	$\frac{5}{4}$	$\frac{4}{7}$	$\frac{37}{44}$	$\frac{51}{59}$	$\frac{38}{50}$	$\frac{25}{26}$	$\frac{583}{74}$	93	136	252

Քամի

Այդուսակ 4

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհող մուտքի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությանը, մ/վ	Միջին տարեկան արագությանը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում			
			Միջին արագությունը, մ/վ												Շատ ուղղությունների	25	50	100
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Սևան ք.	805,5	հունվար	3	2	2	2	1	7	58	25	13	4,2	3,3	25	24	26	28	
			4,1	4,0	3,3	2,7	2,9	5,3	5,4	3,7								
		ապրիլ	5	9	23	8	4	16	28	7	20	3,3						
			3,9	3,7	3,2	2,5	3,8	6,3	5,5	3,4								
		հուլիս	18	35	31	6	3	2	3	2	17	3,1						
			4,7	4,1	3,2	2,7	2,1	2,5	3,1	2,8								
հոկտեմբեր	7	5	7	3	4	15	45	14	33	2,7								
	4,0	3,8	2,7	2,2	2,3	5,3	4,3	2,7										

Տարածաշրջանում մթնոլորտային օդը աղտոտող ձեռնարկություններ չկան և ըստ բնակչության հաշվարկների օդի աղտոտվածությունը շատ ցածր է սահմանային թույլատրելի նորմաներից:

11.5 Հողային ռեսուրսներ

Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում կան զգալի հարթ տարածություններ, առկա են շատ որակյալ հողեր և նպատակահարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է՝ շուրջ 10000 հեկտար: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Տարածքը ներկայացած է միջին բարձրությամբ լեռնաշղթաներով, ուղիղ և ալիքաձև թեքություններով և հարթություններով: Տարածքում գերիշխում են տափաստանային և կարբոնացված անտառային դարչնագույն հողերը, որոնք ձևավորվել են կարբոնատային, խճաքարային բերվածքների վրա: Տարածաշրջանում «Սևան» ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները՝ ավազային, հումուսի աննշան պարունակությամբ: Հիմնականում ձևավորվել են

հողագրունտի 3 խմբեր՝ հողագոյացման խոնավ մարգագետնային, ավազային, սապրոպելիտային տափաստանացված, ինչպես նաև զգալի տարածքներ զբաղեցնող թերի զարգացած ավազակոպճային հողագրունտները:

Սևանա լճի հարավային և արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով:

Իսկ գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը: «Սևան» ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիեֆային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում առկա են լեռնատափաստանային չոր, իսկ 2400մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

Նախատեսվող գործունեությունը տեղակայված է Սևանի ափամերձ տարածքում, որտեղ չկան հողային ռեսուրսները աղտոտող օբյեկտներ, և հողային ռեսուրսների աղտոտվածությունը գտնվում է նորմայի սահմաններում:

11.6 Ջրային ռեսուրսներ

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով: Այս առանձնահատկություններով է պայմանավորված որոշ տեղամասերում միայն գրունտային ջրերի տարածվածությունը, իսկ այլ տեղամասերում՝ բացի գրունտային ջրերից, տարածված են նաև ացիաթթու գազով հարուստ ճնշումային և հանքային ջրեր: Սևանի ջրավազանային տարածքը ներառում է Ձկնագետ, Մասրիկ, Սոթք գետերի գետավազանները, Վարդենիսի ու Գեղամա լեռներից սկսվող գետերը: Ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ-կենցաղային և արտադրական կեղտաջրերը: Մարզի արտանետվող կեղտաջրերի շուրջ 80%-ը չեն մաքրվում: Սևանի ջրավազանային տարածքում ստորերկրյա ջրերի քանակի և որակի նշանակալի փոփոխություններն աննշան են, պայմանավորված բնական պայմաններով՝ ամռան ամիսներին ոռոգման նպատակով հորերի ջրածախսի ավելացմամբ:

Տարածաշրջանի ամենամեծ ջրային ռեսուրսը Սևանա լիճն է, որի ռեկրացիոն գոտում նախատեսվում է իրականացնել գործունեությունը:

Սևանա լիճ. նախատեսվող գործունեությունը տեղակայված է Սևանա լճի ափամերձ տարածքում: Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի գեոքաղաքական մեծ նշանակություն, որպես տարածաշրջանային քաղցրահամ ջրի միակ հսկայական աղբյուր: Այն մի բնատարածքային համալիր է, որն իրենից ներկայացնում է բնության

տարբեր տարրերի սերտ փոխկապակցվածություն, ինչպես նաև ունի կլիմայագոյացնող կարևոր նշանակություն ինչպես հանրապետության, այնպես էլ տարածաշրջանային և գլոբալ առումով: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավարևելյան կամ Մեծ Սևան, հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան: Լճի երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Ափի շրջագիծը մոտ 230 կմ է, միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ³ է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9մ): Լիճը գտնվում է Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա, որի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147,343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22,585 հա: Պահպանական գոտու տարածքը կազմում է 342,920 հա: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: Լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Լիճը գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Սևանա լճի ավազանում ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, իսկ նրա հալոցքը սկսվում է մարտի սկզբից և վերջանում ապրիլի վերջին: Օդի հարաբերական խոնավությունը ենթակա է օրական և սեզոնային տատանումների: Ձմռանը միջին հարաբերական խոնավությունը Փոքր Սևանում կազմում է 70-75 %, Մեծ Սևանում՝ 80-85%, ամռանը՝ համապատասխանաբար Փոքր Սևանում՝ 65%, Մեծ Սևանում՝ 75%:

Սևանա լճի ջրահավաք ավազանում տարեկան գումարային տեղումների բաշխումը ընդհանուր առմամբ համապատասխանում է նրա լեռնագրությանը: Լճի ջրահավաք ավազանում մթնոլորտային տեղումները, կախված են տեղանքի բարձրությունից՝ տարեկան 400մմ-ից (լճի առափնյա շրջանում) մինչև 900 մմ-ի (շրջապատի լեռների մերձգագաթային շրջանում), միջինը՝ 500-600 մմ: Տարվա ընթացքում լճի հայելու վրա տեղումների միջին քանակը կազմում է 390 մմ:

Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է (18 մ), ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է Էկոլոգիական խնդիր: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա-Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան-Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004 թ.):

Համաձայն 2014թ. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկուլյցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվել և իրականացվում են Սևանա լճի և ջրհավաք ավազանի Էկոհամակարգերի պահպանության, Էկոլոգիական հավասարակշռության վերականգնման և կենսաբազմազանության բնականոն զարգացման ու բնական պաշարների կայուն օգտագործման միջոցառումներ: Արդյունքում 2003-2010թթ. լճի

մակարդակը բարձրացել է 384 սմ, ինչը նախադրյալներ է ստեղծել ջրաէկոհամակարգի և կենսաբազմազանության վերականգնման համար: Սևանա լճի ավազանի համայնքների զգալի մասում ոռոգման նպատակով հիմնականում օգագործվում են Սևանա լիճ թափվող գետերի ջրերը, որոնց մեծ մասը անկանոն և չվերահսկվող ոռոգման հետևանքով ամառային ամիսներին ցամաքում են՝ զգալի վնաս հասցնելով գետերում ձվադրող ձկնատեսակներին՝ Սևանի կողակին, Ամառային իշխանին, Գեղարքունիքին և Սևանի բեղլուին, որոնք կորցնում են բազմացման համար անհրաժեշտ միջավայրը և պայմանները:


Սևանա լճի մակարդակի բարձրացման հետևանքով լճի ափամերձ տարածքները ջրածածկվում են, ինչի հետևանքով ջրի տակ են մնում անտառածածկ հատվածներ՝ հսկայական ծառեր, թփեր, ծառերի արմատներ, շենքեր, շինություններ, ճանապարհներ և տարբեր ենթակառուցվածքներ: Պետբյուջեի միջոցներով ջրածածկ անտառաթփային տարածքները շարունակաբար մաքրվում են:

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայքի՝ Սևանա լճի ջրի էկոլոգիական վիճակի վերաբերյալ տեղեկատվության՝ 2020թ. դրությամբ ջրում լուծված թթվածնի պարունակությունը Սևանա լճի հատակամերձ շերտում՝ դիտվել է 4-8մգ/լ տիրույթում: Մակերևութային և միջին շերտերում լուծված թթվածնի կոնցենտրացիան բավարար է կենդանական աշխարհի պահպանության համար (ԼԹ կոնցենտրացիան մեծ է 6մգ/լ-ից):


Մնուցող նյութերի կոնցենտրացիաները լճում մնում են բարձր մակարդակի, ինչն էլ հանդիսանում է պարարտ՝ միջավայր ծաղկման համար: Թափանցիկության արժեքը դիտվել է շատ ցածր՝ 2-2.7 մ տիրույթում:

Ջրի ջերմաստիճանը լճի հատակամերձ շերտերում 4-6°C է:

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԶՐԱՇԵՐՏԵՐ	ՄԵԾ ՍԵՎԱՆ	ՓՈՔՐ ՍԵՎԱՆ
Լուծված թթվածին, մգ/լ	Մակերևութային Հատակամերձ	8.7 - 9.6 4.1 - 7.0	8.2 - 9.1 4.8 - 8.0
Ֆոսֆատ իոն, մգ/լ	Մակերևութային Հատակամերձ	0.030 - 0.043 0.043 - 0.086	0.030 - 0.057 0.071 - 0.100
Նիտրիտ իոն, մգ/լ	Մակերևութային Հատակամերձ	0.009 - 0.018 0.012 - 0.022	0.010 - 0.019 0.013 - 0.028
Ամոնիում իոն, մգ/լ	Մակերևութային Հատակամերձ	0.312 - 0.684 0.28 - 0.73	0.228 - 0.634 0.36 - 0.64
Նիտրատ իոն, մգ/լ	Մակերևութային Հատակամերձ	0.050 - 0.205 0.152 - 0.275	0.050 - 0.202 0.165 - 0.270
pH	Մակերևութային Հատակամերձ	8.7 8.3	8.7 8.4



Սևանա լճի մակարդակը հուլիսի 2021թ. 19-25-ն ընկած ժամանակահատվածում իջել է 1սմ-ով և կազմել՝ 1900.74մ (25.07.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից ցածր է 3սմ-ով, իսկ 2021 թվականի հունվարի 1-ի մակարդակից բարձր է 22սմ-ով:



Սևանա լճի համար գերհսդիր է նաև հարակից բնակավայրերից, արտադրական օբյեկտներից և լճի շուրջը կառուցապատված հանգստյան տներից լիճ թափվող կեղտաջրերի խնդիրը: Մաքման կայանների նախատեսումը և ափամերձ ջրածածկ հատվածների մաքրումը Սևանա լճի համար խիստ անհրաժեշտություն է:

11.7 Բուսական և կենդանական աշխարհ

Բուսական աշխարհ. Տարածքը տափաստանային միջին լեռնային (1400-2300ծ.մ.բ.) է, իրեն բնորոշ լեռնատափաստանային բուսականությամբ՝ հատիկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ:

Տափաստանային գոտին Հայաստանի տարածքի ամենաընդարձակ գոտին է, որը սկսվում է 1500-1600 մ-ից, երկրի հյուսիսային հատվածում հասնում է մինչև 2000մ բարձրության, իսկ հարավային հատվածում՝ 2400-2500մ՝ տափաստանային և գորշ կարբոնատային, անտառային տիպերով: Աչքի են ընկնում բուսական համակեցությունների բազմազանությամբ: Ծայրահեղ չորասեր, գուղձավոր, պնդաճիմ հացազգի խոտաբույսերի, փշաբարձիկավոր տարախոտերի առկայությունը բուսականության բնորոշ առանձնահատկություններից է: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են հիմնականում գիհու և կաղնու անտառները:

Սևանի ավազանին բնորոշ են ցամաքային էկոհամակարգերը՝ մարգագետիններ, տափաստաններ, անտառային և նոսրանտառային, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված տարածքները: Պայմանավորված ռելիեֆային առանձնահատկություններով՝ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Ցածրադիր վայրերում, լճից ազատված

ավազուտների վրա գերակշռում են անապատներն ու կիսաանապատները: Որպես ռեիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովոլ թփուտները՝ ցածրաճ գիիուտները և այլն:

Տարածաշրջանի բուսականությունը հիմնականում տափաստանային է՝ հացազգային, տարախոտա-հացազգային/*Festuca valesiaca* Gaudin, *F. ovina* L., *Koeleria albiovii* Domin, *K. cristata* (L.) Pers., *Bothriochloa ischaemum* (L.) Keng, *Stipa capillata* L., *S. Lessingiana* Trin. Et Rupr., *S. Tirsa* Stev., *Elytrigia trichophora* (Link) Nevski, *Galium verum* L., տեսակներ *Agropyron*, *Andropogon*, *Scabiosa*, *Veronica*, *Artemisia*, *Achillea*, *Astragalus*/:

Տափաստաններում հողերի մշակումը, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծումը, խոտհարքները, նաև հրդեհները բացասաբար են ազդում բուսածածկույթի և կենդանական աշխարհի վրա: Բնական բուսածածկույթին փոխարինելու են գալիս մշակաբույսերը՝ ցորեն, եգիպտացորեն, արևածաղիկ, պտղատու այգիները, իսկ ողողատներում՝ բանջարեղենի մշակությունը: (UNDP):

Սևանի ջրհավաք ավազանի տափաստանային գոտին՝ 1906-2400մ ծովի մակերևույթից բարձր է, հիմնականում ներկայացված է չոր և տիպիկ տափաստաններին բնորոշ խոտաբույսերով՝ շյուղախոտ, փետրախոտ և այլն: Այստեղ աճում են նաև գիիու, մասրենու, արոսենու, կծուխորի, այծատերևուկի և այլ թփուտներ: Բավական շատ են գազերը, ոգնաթփերը, որոնց թվում կան մի շարք հազվագյուտ և անհետացող տեսակներ: Մարդու կողմից առավել յուրացված է հենց այս գոտին, որի զգալի մասը վերածվել է վարելահողերի, իսկ մնացածը ակտիվ օգտագործվում է որպես խոտհարքեր և արոտավայրեր:

Համաձայն ՀՀ կառավարության «Սևան»ԱՊ-ի 2007-2011թթ կառավարման պլանի՝ Սևան ազգային պարկի և պահպանական գոտու տարածքում գրանցված են մոտ 1619 տեսակ անոթավոր բույսեր (Հայաստանում գրանցված բարձրակարգ բույսերի կեսից ավելի), 23 էնդեմիկ բուսատեսակներ, որոնցից 13-ը Սևանի ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ: Միայն ազգային պարկի տարածքում աճում են Հայաստանի էնդեմիկ և Սևանա լճի ավազանի 5 էնդեմիկ տեսակներ: Համաձայն «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույցի՝ Սևանի տարածաշրջանին բնորոշ են տափաստանները, մարգագետինները, կաղնու անտառները և գիիու նոսրանտառները: Էնդեմիկ բուսատեսակների թիվը 28 է, իսկ ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների թիվը՝ 48:

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու առկա է շուրջ 32 ծառատեսակ, 102 թփերի տեսակ, 1146 բազմամյա խոտաբույս և 307 միամյա ու երկամյա բուսատեսակներ: Տեղանքում աճում են հացազգիներին պատկանող շատ բույսեր՝ շյուղախոտի (*Festuca* sp.), որմի (*Lolium* sp.) 95.1և դաշտավլուկների (*Poa* sp.) տարբեր տեսակներ:

Սևանա լճի ավազանում բավականին տարածված են նաև բուսականության էքստրագոնալ տիպերը՝ փլուզուտային, քարացրոնային և ժայռային բուսականությունը: Դրանք առանձին հատվածներով հանդիպում են բոլոր

բարձունքային գոտիներում: Իսկ Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ):

Կարմիր գրքում գրանցված են տարածաշրջանին բնորոշ՝ Խոզանափուշ Ֆյոդորովի-Cousinia fedorovii Takht, Լրջուն Սևանի-Isatis sevangensis N. Busch, Թրաշուշան հայաստանյան -Gladiolus hajastanicus Gabrielian, Յիրիկ Նրբագեղ - Iris elegantissima Sosn, Վիշապագլուխ ավստրիական - Dracocephalum austriacum L., Գառնառվույտ հայկական - Oxytropis armeniaca Sosn. ex Mulk.:

**Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող ՀՀ բույսերի
Կարմիր գրքում ներառված/մասնակի/ հազվագյուտ, անհետացող
բուսատեսակները**

Աղյուսակ 6

հհ	Բուսատեսակներ		
	հայերեն	լատիներեն	ԲՊՄՄ-ի Կարմիր գրքում կատեգորիան
1	Եզնավոր Սոսնովկա	Bupleurum sosnowskyi Manden	VU
2	Խաչածաղկավորներ	Brassicaceae	EN
3	Լրջուն Սևանի	Isatis sevangensis N. Busch	CR
4	Չանգակազգիներ	Campanulacea	CR
5	Մեխակ քուռի	Dianthus grossheimii Schischk	EN
6	Գազ սուկաչով	Astragalus sukaczewii Derv. Et Jelenevsky	VU
7	Գառնառվույտ լազիստանյան	Oxytropis lazica Boiss.	EN
8	Արոսենի Հայաստանյան	Sorbose hajastana Gabr	VU
9	Անողխուցուկ գրոսիեյսի	Puccinellia grossheimiana V.I.Krecz.	EN



Նկար 3. Վիշապագլուխ ավստրիական նկար 4. Գառնառվույտ հայկական



Նկար 5. Անողնուցուկ գրոստեյմի

Տարածաշրջանում կան նաև ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված՝ վտանգված սևկատեսակներ, մասնավորապես Հելվես սև- *Helvella atra* J.Küenig, Մուտինուս շնային -*Mutinus caninus* (Huds.: Pers.) Fr., կրիտիկական վիճակում գտնվող՝ Սարկոսոմա-*Sarcosoma globosum* (Schmidel : Fr.) Casp., Միրիոստոմա-*Myriostoma coliforme* (Dicks. : Pers.) Corda և այլն:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ԱՊ-ի տարածքի ավիամերձ հատվածում, որտեղ առկա է մարդածին ազդեցությունը, ուստի ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները բացակայում են:

Կենդանական աշխարհ: Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է ողնաշարավոր կենդանիների 330 տեսակներով, այդ թվում՝ կաթնասուններ՝ 44 տեսակ (գայլ, աղվես, նապաստակ, կզաքիս, փորսուղ, աքիս, լուսա, ոչ հաճախ նաև արջ և այլն), թռչունների՝ 267 տեսակ, 4 տեսակ երկկենցաղներ, 16 տեսակ սողուններ և 9 տեսակ ձուկ, այդ թվում Սևանի իշխանը, որը գրանցված է Կարմիր գրքում, Սևանի կողակը, Սևանի բեղլուն և այլն:

Համաձայն ՀՀ կառավարության «Սևան» ԱՊ-ի 2007-2011թթ կառավարման պլանի՝ «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են անողնաշարավորների. խեցգետիններ, 43 տեսակի փափկամարմիններ՝ խիուկներ, լորձամուրյուկներ, միջատներին պատկանող 639 տեսակի հողվածոտանիներ: Դրանցից 6-ը Հայաստանի Էնդեմներ են: Կապտաթիթեռը (*Maculinea nausithous* Bergs), որը հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում: Լճում հանդիպում են երկարաչանչ խեցգետին: Ողնաշարավորներից հայտնի է Սևանի Էնդեմիկ իշխանս իր 4 տարատեսակներով՝ ձմեռային բախտակ՝ (*Salmo danilewskii*), ամառային բախտակ՝ (*Salmo ischchan aestivalis*), գեղարքունի՝ (*Salmo ischchan gegarkuni*), բոջակ՝ (*Salmo ischchan danilewskii*), որոնք

միմյանցից տարբերվում են ձվադրման տեղերով ու ժամկետներով (երբեմն դրան ավելացնում են 5-րդ սեռը՝ ալաբալախ՝ գետայինը), սիգ ձուկը, Էնդեմիկ ձկներից՝ Սևանի բեղուն և Սևանի կողակը: Պատահաբար լիճ Է ներթափանցել նաև լճածածանը: Հանդիպում են նաև 4 տեսակի երկկենցաղներ, 16 տեսակի սողուններ, օձեր, 267 տեսակի թռչուններ՝ արագիլ, ֆլամինգո, սագեր, որոր, կոցար, աղավազգիներ, հավազգիներ և այլն: Հանդիպում են կաթնասունների 44 տեսակ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին.

- ❖ Միջատակերներ (Insectivora),
- ❖ Կրծողներ (Rodentia),
- ❖ Նապաստակներ (Logomorpha),
- ❖ Չղջիկներ (Chiroptera),
- ❖ Գիշատիչներ (Carnivora),
- ❖ Սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla):

Նշված տեսակներից 6-ը գրանցված են Հայաստանի Կարմիր գրքում (վայրենակերպը, ջրասամույրը, գորշ արջը, խայտակաքիսը, անտառային կատուն, բեզդարյան այծը):

Սողուններից հանդիպում են մի շարք մողեսներ, սպիտակափոր ժայռային մողեսը, նաիրյան ժայռային մողեսը, ռոստոմբեկովի ժայռային մողեսը, հայկական ժայռային մողեսը, վալենտինի ժայռային մողեսը, իսկ օձերից՝ սովորականը, ջրային լորտուները, պղնձօձը, լեռնատափաստանային իժը: Երկկենցաղներից առկա են կանաչ դողոշը, լճագորտը, փոքրասիական գորտը և շելկովնիկի ծառագորտը:

Ջրային կամ ջրածահճային կենդանիների համար որպես ապրելավայր ծառայում են Սևանա լճի ջրերը, ավամերձ գոտու ճահճուտներն ու լիճ թափվող գետերի գետաբերանները: Վերջին 4 տասնամյակի ընթացքում Սևանա լճի մակարդակի 19 մ իջեցումը, ինչպես նաև ավելի քան 10 հազ. հա ճահճուտների արհեստական չորացումը, նախկին ժայռոտ ավերի վերացումը խիստ բացասաբար են անդրադարձել ավազանի կենդանական աշխարհի վրա, որը հատկապես ցայտուն կերպով արտահայտված է թռչունների մոտ:

Սևանի ավազանում հանդիպում էին 267 տեսակի թռչուններից 48-ը բնադրող էին: 160 տեսակ չվող թռչուններից մնացել է 50-ը: Էնդեմ հանդիսացող Սևանի ծովորորի համար բնական միջավայրը դարձել է Էկոլոգիապես անկայուն:

Այսօր դրանցից շատերը՝ մոխրագույն սագը, տուրպան, կարմրակտուլց և կարմրագլուխ բադերը, սպիտակագլուխ բադը (սավկան), չեն բնադրում լճի տարածքում:

Կարմիր գրքում գրանցված են՝ կաթնասունների 6 տեսակ, (Բեզդարյան այծ-*Capra aegagrus Erxleben*) և այլն), սողուններից 2 տեսակ(խայտաբղետ՝ Անդրկովկասյան բազմագույն մողեսիկ-*Eremias arguta transcaucasica Darevsky, 1953*), փոքրասիական մողեսները- *Darevskia rostombekovi Darevsky 1957*): 39 թռչնատեսակներ (Հայկական որոր-*Larus armenicus*), վարդագույն հավալուն - *Pelecanus onocrotalus Linnaeus, 1758* և այլն), սագանմաններից՝ սպիտակագլուխ բադ կամ սավկա - *Oxyura leucocephala Scopoli, 1769*, ձկներից՝ Սևանի իշխանը իր տարատեսակներով, Սևանի բեղուն (*Barbus goetschaicus Kessler*) և Սևանի կողակը (*Varicorhinus capoeta sevangi, Filippi*) հոդվածոտանիներից՝ Արիոն կապտաթիթեռ-*Maculinea arion zara Jachontov*, Մթնշաղային կապտաթիթեռ-*Maculinea nausithous*,

Անտեսված կապտաթիթեռ - *Agrodiaetus neglectus* Dantchenko, 2000, Նինայի կապտաթիթեռ - *Agrodiaetus ninae* Forster, 1956, Թուրքական կապտաթիթեռ- *Agrodiaetus turcicus* Koçak, գրանցված են միջազգային միության Կարմիր գրքում:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող ՀՀ կենդանիների Կարմիր գրքում ներառված/մասնակի/ հազվագյուտ, անհետացող կենդանատեսակները

Աղյուսակ 7

hh	Կենդանատեսակներ		
	հայերեն	լատիներեն	ԲՊՄՄ-ի Կարմիր գրքում կատեգորիան
1	Մոխրագույն սագ	<i>Anser anser</i>	VU
2	Լայնակտուլց բաղ	<i>Anas dypeata linneus</i>	VU
3	Կարմիր ցին	<i>Milvus milvus</i>	EN
4	Հայկական որոր	<i>Larus armenicus Buturlin</i>	VU
5	Գիշանգղ	<i>Haliaeetus albicilla linnaeus</i>	EN
6	Ներկարարար	<i>Coracias garrulus</i>	VU



Նկար 6. Հայկական որոր



Նկար 7. Նինայի կապտաթիթեռ

Կենդանիների Կարմիր գրքում ներառված տեսակները հիմնականում պահպանված են չխախտված բնական տարածքներում և չհնգիլների մոտ:

11.8 Հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է «Սևան» ԱՊ-ի սահմաններում, որը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝

արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիշի», «Գիլլի» և «Արտանիշի», ընդհանուր 7464 հա մակերեսով: Նախատեսվող գործունեության վայրը «Սևան» ԱՊ-ի տարածքագործառնական գոտիներից ամենամոտը գտնվում է «Նորաշեն»-ի արգելոցից 1,5 կմ հեռավորության վրա: «Նորաշեն»-ի արգելոցը գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում, որի տարածքը կազմում է 839հա, որից ցամաքային տարածքը՝ 341հա, ջրայինը՝ 498 հա: Արգելոցի նպատակն է ապահովել թռչունների, մասնավորապես հայկական որորի/Էնդեմիկ տեսակ/ բնականոն ապրելակերպն ու վերարտադրությունը: Արգելոցի տարածքը գրեթե հարթ է՝ ընկած է Սևանա լճի ափից մինչև 1908մ բարձրությունը: Արգելոցի ցամաքային հատվածը անտառազուրկ է, տեղ տեղ հանդիպում են չիխանի թփեր, իսկ կղզիները քարապատ են:

Անտառային տնկարկներից հանդիպում են հիմնականում չիչխանի, թեղու և սոճու ծառուտները:

Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի N 177-Ն որոշման նախատեսվող գործունեության վայրի ճովագարդ համայնքի հատվածում «Նորաշեն»-ի արգելոցի շարունակության վրա գտնվող հատվածը առանձնացվել է որպես բնական լանդշաֆտի պահպանման գոտի /ԲԼՊԳ/: Տարածքային հատվածում ընդգրկված է նաև հատված՝ ազգային պարկի տնտեսական գոտուց:

11.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 9-ի N 80-Ն որոշման՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակ»-ի, ճովագարդ համայնքում կան հետևյալ պատմական, մշակութային հուշարձանները.

Ճովագարդ գյուղ

Աղյուսակ 8

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԳԵՐԵՉՄԱՆՈՑ	19-20-րդ դդ.	գ. մ.	S	գործող գերեզմանոցի հին հատվածում
2.				ԵԿԵՂԵՑԻ	17-18-րդ դդ.	կևտ	S	կիսավեր
	2.1.			գերեզմանոց	16-18-րդ դդ.		S	Ավերված՝ գյուղի կառուցապատման հետևանքով Գերեզմանոցի խաչքարերը տեղափոխվել են եկեղեցու հարևանությամբ գտնվող նորակառույց մատուռ
		2.1.1		խաչքար	11-12-րդ դդ.		Հ	կիսավեր եկեղեցում, պատվանդանին
		2.1.2		խաչքար	12-13-րդ դդ.		Հ	ազուցված մատուռի առ պատին, ներքուստ, վերնամասը՝ չի պահպանվել
		2.1.3		խաչքար	14-15-րդ դդ.		Հ	մատուռի խորանում
		2.1.4		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	կիսավեր եկեղեցում, վերնամասը՝ կոտրված
		2.1.5		խաչքար	15-16-րդ դդ.		Հ	կիսավեր եկեղեցում, ստորին մասը կոտրված, երկատված
		2.1.6		խաչքար	1530 թ.		Հ	մատուռի առ պատին քիվը՝ կոտրատված
3.				խաչքար	9-րդ դ.	գ. մ.	Հ	Սուրեն Կատվայանի տնամերձում գտնվող նորակառույց սրբատեղիում
4.				խաչքար	13-րդ դ.	գ. մ.	Հ	վերին ձախ մասը կոտրված կանգնեցված մեծադիր քարակտորի վրա

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի ՀՀ Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների N 385-Ն որոշման 5-րդ հավելվածի համայնքում առկա են.

Աղյուսակ 9

ԽԱՉՔԱՐ	9 դ.	գյուղի մեջ, Սուրեն Կատվայանի տնամերձ հողամասում գտնվող նորակառույց սրբատեղիում	<	3
ԽԱՉՔԱՐ	13 դ.	գյուղի մեջ, քարաբեկորի վրա	<	4

Համաձայն կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշման՝ Գեղարքունիքի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 10

Երկրաբանական

Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, Երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մադինա գյուղից 3.5 կմ արմ
«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ

Ջրաերկրաբանական

«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա

«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա
--------------------------------------	--

Ջրագրական

«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
------------	---

Կենսաբանական

«Ենթալայան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ
------------------------	---------------------------------------

Հայաստանի կառավարությունը 2021թ. դեկտեմբերի 8-ին լրացում է կատարել ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 967-Ն որոշման մեջ ներառելով նոր բնության հուշարձան՝ Գեղամա լեռնաշղթայի կարմիր կատար (թառ) լեռը :

Նշված պատմամշակութային և բնության հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում:

12. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Գեղարքունիքի մարզում տեղակայված Սևան ազգային պարկի ռեկրեացիոն գոտում: Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 4800.0

մ²: Նախատեսվող գործունեության ենթակա տարածքներում քանդման, ապամոնտաժման կամ տեղափոխման, ինչպես նաև ծառահատման, ծառերի տեղափոխման, մաքրման աշխատանքեր չեն նախատեսվում: Բոլոր կառուցապատման լուծումները կլինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը, չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը:

12.1 տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները

Ընկերությանը «Սևան» ազգային պարկի կողմից մինչև 2032 թվականը վարձակալությամբ տրամադրվել է նախատեսվող գործունեության 4800 մ² ընդհանուր մակերեսով տարածք:

Նախատեսվող գործունեության հիմնական տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- Հողամասի ընդհանուր մակերես՝ 0.48հա,
- Թեթև կոնստրուկցիաներով քոթեջներ՝ 452մ² (9.4%)
- Մայթեր՝ 110մ² (2.3%)
- Կանաչապատման մակերես (սիզամարգ, վարդի թփերով)՝ 1211մ² (25,3%)
- Ավազակոպճային շերտ՝ 800 մ² (16.6%)
- Լողափ՝ 1062մ² (22.1%)

- Ջրածակ տարածք՝ 1165մ² (24.3%)

- Հանգստացողների քանակ՝ 20 մարդ, սպասարկող անձնակազմ՝ 3 մարդ:

Նախատեսվող հանգստյան գոտու կառուցման տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնքի վարչական տարածքում՝ Սևանա լճի ափամերձ հատվածում: Տարածքը հարակից է Մարտունի Սևան ավտոճանապարհին:

12.2 Տարածքի կառուցապատում

Գործունեության իրականացման ընթացքում կառուցապատվելու է հողատարածքի 9,4%-ը (452մ²) և մայթեր 110մ² (2.3%): Հիմնականում պահպանվելու է բնական լանդշաֆտը՝ զուգահեռ կանաչապատվելու և բարեկարգվելու է տարածքը: Նկատի ունենալով, որ տարածքի հիմնական մասը գտնվում 1905մ նիշից ցածր տարածքներում, ուստի 1211մ² (0,12հա) կանաչապատման համար ծառատեսակներ չեն օգտագործվելու, կանաչապատումն իրականացվելու է սիզամարգերով(թփածառ) կանաչապատումով: Վերջին տարիներին ջրի բարձրանալու շնորհիվ հատկացված տարածքից ջրածածկ է եղել 1165մ² (24.3%) տարածք: Լողափնյա տարածքը կազմում է 1062մ² (22.1%):

Տարածքի կառուցապատումը կատարվելու է համաձայն՝ «ՀՀՇՆ 20.04_«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմերին» համապատասխան:

Մինչև շարժական տնակների տեղադրումը տարածքում կատարվելու է մաքրման աշխատանքներ՝ քարերից, կենցաղային աղբի մնացորդներից, առանց լանդշաֆտը խախտելու: Տարածքում տեղադրվելու են 452մ² ընդհանուր մակերեսով վեց շարժական տնակներ (մեկ, երկու, երեք սենյականոց), որոնք իրականացվելու են թեթև կոնստրուկցիաներով: Քոթեջները տեղադրվելու են 1905 նիշից ցածր տարածքներում, իրականացվելու են բացառապես ժամանակավոր կառույցներով:

Քոթեջները երեք տեսակի են.

- քոթեջ 1- 3 հատ՝ 19,37, 1903,9, 1904,8 նիշերում

- քոթեջ 2- 2 հատ՝1903,2,1904,8 նիշերում

- քոթեջ 3- 1 հատ՝ 1900 նիշում:

Քոթեջները նախագծված է ՀՀՇՆ 2-րդ 6.02-2006 սեյսմակայուն շինարարության նորմերի պահանջներին համապատասխան:

Քոթեջ-1-ն ունի երկու ննջասենյակ մեկ շոգեբաղնիք և մեկ սանհանգույց, խոհանոց, դիմացի հատվածում կա նաև մուտքի հարթակ որը ամառային տաք օրերին հյուրասենյակի հետ դառնում է մեկ ամբողջություն՝ վիտրաժները բացելու շնորհիվ:

Քոթեջ-2-ն ունի մեկ ննջասենյակ և մեկ սանհանգույց, խոհանոց, դիմացի հատվածում կա նաև մուտքի հարթակ, որը ամառային տաք օրերին հյուրասենյակի հետ դառնում է մեկ ամբողջություն՝ վիտրաժները բացելու շնորհիվ: Միջնորմերը նախատեսված է իրականացնել գիպսոստվարաթղթից:

Քոթեջ-3-ն ունի երեք ննջասենյակ և երկու սանհանգույց, խոհանոց, դիմացի հատվածում կա նաև մուտքի հարթակ որը ամառային տաք օրերին հյուրասենյակի հետ դառնում է մեկ ամբողջություն՝ վիտրաժները բացելու շնորհիվ: Միջնորմերը նախատեսված է իրականացնել գիպսոստվարաթղթից:

Քոթեջները նախատեսված է կառուցել մետաղից, երեսապատվելու է սենդվիչ պանելներով, իրականացվելու է նաև փայտյա երեսապատում: Նախատեսված է

իրականացնել ներքին հարդարման աշխատանքներ, որոնց համար օգտագործվելու են բարձրորակ շինարարական նյութեր:

Տարածքում նախատեսվում է 10 ավտոմեքենայի համար ավտոկայանատեղի՝ ավազակոպճային ծածկույթի վրա: Ավտոկայանատեղին տեղադրված է ավտոմոբիլային ճանապարհի հարակից հատվածում՝ 1903,2-1905,2 նիշերի վրա:

Շահագործման փուլում հանգստացողների առավելագույն քանակը կազմելու է 20 մարդ: Սպասարկող անձնակազմը լինելու է 3 մարդ՝ 2 պահակ, 1 տեխնիկական աշխատող: Սպասարկող անձնակազմը տեղակայվելու է քոթեջներից մեկում:

Աշխատողների համար ստեղծվելու են բավարար կոմունալ կենցաղային բոլոր հարմարությունները՝ գիշերակացով:

Տարածքում սան հանգույցի(զուգարան) տեղադրում չի նախատեսվում: Սան հանգույցները նախատեսվում են միայն տնակների ներսում:

1905 նիշից բարձր՝ 190,5 նիշի վրա տարածքում նախատեսվում է մաքրման կայանի տեղադրում: Մաքրման կայանը գտնվում է Սևանա լճից 32,6մ հեռավորության վրա:

Ներտարածքային հետիոտն ճանապարհները իրականացվելու է ավազակոպճային խառնուրդով:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքը կառուցապատված չէ, բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերը:

Տարածքի ճարտարագիտական հատակագծումն իր մեջ ներառում է քաղաքաշինության համար անհրաժեշտ տարածքների պիտանելի դարձնելու միջոցառումներ:

Տարածքի կառուցապատումը կատարվելու է համաձայն՝ ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական և առկա քաղաքաշինական փաստաթղթերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N1563-Ն որոշման՝ Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան: Հանգստյան գոտին ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Տարածքում և շինություններում տեղադրվելու են նաև լուսավորության, օդափոխության, հրդեհաշիջման համակարգեր:

Քոթեջները իրականացվելու են միայն ժամանակավոր կառույցներով, տեղադրվելու են առանց հողային աշխատանքների իրականացման, ցցերով ամրացվելու է գրունտի մեջ: Հողային աշխատանքեր կատարվելու են մաքրման կայանի, ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների տեղադրման ժամանակ: Հանգստի գոտու կառուցապատման ժամանակ կատարվելու է 370մ³ ծավալի հողային աշխատանքներ:

Նախատեսվող գործունեության ժամանակացույցը.

Կառուցապատումը տևելու է 2 տարի (528 աշխատանքային օր)

12.3 Էլեկտրամատակարարում

Համաձայն Էլեկտրամատակարարման նախագծի՝ շահագործման փուլում քոթեջների ավտոկայանատեղիի Էլեկտրամատակարարումը՝ կատարվելու է տեղանքի ՏԵ-ենթակայանի համապատասխան բաշխման վահանակից՝ 220վ լարման, 50Հց հաճախականության և 12,9կՎԱ հզորության սնող ցանցով: Էլեկտրամատակարարումը կատարվելու է 3-գծանի սխեմայով: Քոթեջներն ապահովված են լինելու Էլեկտրական սարքավորումներով, Էլեկտրական լուսավորությամբ՝ համալրված վթարային և Էվակուացիոն լուսավորության մարտկոցներով, WiFi սարքավորումով:

Սնուցող մալուխները և բաշխիչ ցանցերն իրականացվելու են PVC/PVC տիպի՝ 3x4մմ, 3x6մմ միաձույլ պղնձե հաղորդալարերի միջոցով՝ պարփակված ճկախողովակի մեջ կամ 20մմ տրամագծով ՊՎՔ խողովակով:

Քոթեջների լուսավորության համար իրականացվելու են LED և շիկացման պարուկրով, հալոգենային կամ լյումինեսցենտային լրկալ լուսատուներով:

Ենթակայանների սնումը իրականացվում է օդային կամ մալուխային գծերով ըստ տեխնիկական պայմանների:

Շինարարական աշխատանքների ընթացքում Էլեկտրամատակարարումը ժամանակավորապես իրականացվելու է հարևան հանգստի գոտու տարածքից՝ մինչև իր տարածքում հոսանքի միացելը: Ընկերությունը դիմել է <<ՅԵՑ>>ՓԲԸ-ին Էլեկտրամատակարարման պայմանագիր կնքելու համար:

12.4 Ձերմամատակարարում

Գործունեության իրականացման ընթացքում տարածքում գազամատակարարման համակարգի կառուցում չի նախատեսվում: Ձեռուցումը կատարվելու է յուրաքանչյուր քոթեջում տեղադրվող անհատական Էլեկտրասարքերով:

12.5 Ջրամատակարարում. Ջրահեռացում

Գործունեության ենթակա տարածքում բացակայում է ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը:

Ջրամատակարարում. շինարարության փուլում աշխատողների խմելու ջուրը կատարվելու է բերովի ջրով՝ մինչև ջրամատակարարման համակարգի կառուցումը: Իսկ հանգստի գոտու կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում ջրամատակարարումը կատարվելու է Լճափնյա փողոց 12/3 տարածքից՝ 260մ հեռավորության վրա գտնվող ջրամատակարարման համակարգից՝ համաձայն «Վեոլիա ջուր»ՍՊԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Հավելված 7:

Ջրամատակարարման ցանցերը մոնտաժվելու են D=50մմ տրամագծով և P=2.0մթն պ/Էթ ճնշման խողովակներով: Կառուցվելու է ջրաչափական հանգույցի համար դիտահոր: Ջրամատակարարումն կատարվելու է շուրջօրյա:

Քոթեջներում ներքին ջրամատակարարումը կատարվելու է de 25-de 20, իսկ շինությունների ներանցման հատվածները՝ de 32-de 20 պոլիպրոպիլենային խողովակներով: Տաք ջրամատակարարման համար նախատեսվել են de 25-de 20 պոլիպրոպիլենային խողովակներով՝ տեղադրված 5մմ հաստությամբ արհեստական կաուչուկից ջերմամեկուսիչ խողովակների մեջ:

Զրահեռացում. Քանի որ տարածքում բացակայում է ջրահեռացման համակարգը, ընկերությունը նախատեսում է կենցաղային կեղտաջրերի հեռացման համար շինարարության փուլում տեղադրել 1 պլաստիկ բիոզուգարան:

Շահագործման փուլում կեղտաջրերի հեռացման նպատակով 1905մ կիշից բարձր տարածքում տեղադրվելու է ռուսական արտադրության՝ «ՅՈՒԲԱՍ 30» ԼՈԳՈ տեսակի (քաշը՝ 650 կգ, հզորությունը՝ 240վտ, առավելագույն միանգամյա արտահոսքը՝ 1500լիտր) 1 մաքրման կայան: «ՅՈՒԲԱՍ 30»-Լոգո տեսակի կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանը (ՄԿ) նախատեսված է տնտեսական կենցաղային կեղտաջրերի վնասազերծման համար: Կայանի բոլոր մասերը, որոնք շփման մեջ են գտնվում կեղտաջրերի հետ, պատրաստված են չժանգոտող կայուն նյութից՝ պոլիպրոպիլենից, որն ապահովում է դրանց աշխատանքի երկարակեցությունը՝ ոչ պակաս քան 50 տարի ժամկետայնությամբ: Իր բարձր ջերմամեկուսացմամբ պայմանավորված՝ մաքրման կայանն անխափան աշխատում է նաև ձմռան պայմաններում:

Քոթեջների կոյուղու համակարգը կատարվելու է ստորգետնյա եղանակով՝ de 110 թողարկ խողովակների միջոցով, միանալով կոյուղու բակային ցանցին: Բակային հատվածում կոյուղու թողարկները միացվելու են ՆԴՀ(1-7) դիտահորերին, որոնք հավաքող կոլեկտորի և պոմպի միջոցով մղվելու են դեպի մաքրման կայան:

Նախատեսվող գործունեության նախագիծը կազմվել է ՀՀ-ում գործող նախագծային և շինարարական նորմերին համապատասխան: Նախագծային լուծումներում ապահովված են հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:

12.6 Աղբահանություն

Շինարարության փուլում տեղադրվելու է 1x1 չափերի 1 աղբարկղ:

Շահագործման փուլում տեղադրվելու է 1,5x1 չափերի 1 հատ և 6 հատ փոքր, կետային աղբամաններ: Տարածքի աղբահեռացումը կատարվելու է համաձայն՝ Ծովագարդ համայնքի կողմից տրված տեղեկանքի՝ պայմանագային հիմունքներով (Հավելված 9.):

12.7 Լողափի կահավորում

Համաձայն ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման, N2 հավելվածի լողափի կահավորմանը ներկայացվող պահանջներն են.

- հանդերձարան-խցիկներ (հանգստացողների 20 տոկոսի հաշվարկով՝ 100 մարդու համար՝ 5 խցիկ, 1 մարդու համար՝ 1,2-1,3 քառ. մետր մակերեսով:

- Տենտեր, հովանոցներ (հանգստացողների 30 տոկոսի հաշվարկով՝ 1 մարդու համար՝ 3,5 քառ. մետր):

- Լողափի գոտու մանկական հատվածը կարող է կահավորվել տոպոգանով (H = 2,5-3,0 մետր՝ մեկ ելքով դեպի լիճ), շվաքարաններով, ավազամաններով, մանկական ջրավազաններով, ճոճանակներով:

- Աղբանոթներ՝ 50 մարդու համար՝ 1 աղբանոթ հաշվարկով:

- Ցնցուղարանները (75 մարդու համար՝ 2-4 ցնցուղ, բայց առնվազն 2 ցնցուղ հաշվարկով), խմելու ջրի ծորակները (200-300 մարդու համար՝ 1 ծորակ, բայց առնվազն 1 ծորակ հաշվարկով):

- Չուզարանները պետք է տեղադրվեն գոտուց առնվազն 50 մետր հեռավորության վրա (50 մարդու համար՝ 1 զուգարանակոնք և 1 միզաման, բայց առնվազն 2 զուգարանակոնք և 1 միզաման):

- Աղբի կոնտեյներները, որոնք պետք է ունենան փակվող կափարիչներ, կտեղադրվեն հարթակների վրա և կունենան հարմար մերձատար ուղիներ:

Շահագործման փուլում կառավարության որոշման հավելված 2-ի պահանջներից հանգստյան գոտու լողափնյա հատվածում նախատեսվում է՝ 1 տենտեր, 1 հովանոց, 1 հանդերձարան-խցիկ, 1 աղբաման:

12.8 Կանաչապատում, բարեկարգում

Նախատեսվում է 1211 մ² մակերեսով կանաչապատում՝ սիզամարգի և տեղ-տեղ թփածև ծաղիկների տեսքով: Կանաչապատման ընթացքում ծառերի տեսականի չի նախատեսվում նկատի ունենալով, որ տարածքը գտնվում է 1905 կիշից ցածր տարածքում:

Կանաչապատումն իրականացվելու է «Սևան» ԱՊ-ի հետ համաձայնեցված կանաչապատման ծրագրին համապատասխան: Կանաչապատման նախագիծը ներկայացված է ԱՊ-ի համաձայնության: Հավելված 9

Նախատեսվում է տարածքի բարեկարգում՝ ներտարածքային ճանապարհների տեսքով՝ խճազվաքարերով:

Մուտքը տարածք իրականացվելու է հարակից տարածքի ձախակողմյան հատվածից:

12.9 Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու և կենցաղային նպատակով:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում, շշերով՝ ըստ պահանջի:

Ջրցանի, աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվող ջուրը բերվելու է ավտոցիստեռնով, որը լցվելու է տարածքում գոյություն ունեցող 10մ³ տարողություն ունեցող պլաստմասե բաք: Տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով ըստ պահանջի, լիցենզիա ունեցող կազմակերպությունների միջոցով՝ պայմանագրային հիմունքներով: Ջուրը նախատեսվում է նաև արտաքին հրդեհամարման համար:

Ջուրն օգտագործվելու է նաև բետոնախառնուրդ ստանալու նպատակով: Շինարարության համար անհրաժեշտ բետոնանյութը պատրաստվելու է տեղում մետաղական բաքերի մեջ: Բետոնն օգտագործվելու է 1905 կիլոգրամ բարձր, մաքրման կայանի տեղադրման համար:

Շահագործման փուլում հանգստացողների համար խմելու ջուրը կմատակարարվի ջրամատակարարաման համակարգից՝ շուրջօրյա:

Շինարարության և շահագործման փուլերում աշխատողների և հանգստացողների կենցաղային և տնտեսական ջրածախսը կազմում է:

Շինարարության փուլում աշխատողների (6 մարդ՝ 1 տեխնիկական աշխատող և 5 բանվոր) խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է

N - ջրածախսի նորման տեխնիկական աշխատողների համար՝ 0.016մ^3 ,

n_1 - բանվորների թիվն է,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ $0.025 \text{մ}^3/\text{մարդ օր}$

T -աշխատանքային օրերի առավելագույն թիվն ամբողջ շինարարության ժամանակ՝ 24 ամիս՝ 528 օր:

Այսպիսով.

$$W = (1 \times 0.016 + 5 \times 0.025) \times 528 = 74,448 \text{մ}^3/\text{շին.ժամ, միջին օրական } 0.141 \text{մ}^3:$$

Ընդամենը շինարարության փուլում 2 տարվա համար՝ $74,448 \text{մ}^3/\text{շին.ժամ}$:

Շահագործման փուլում աշխատողների (3 սպասարկող) և 20 հանգստացողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է, ելնելով առանձին լոգարաններով հյուրատներում 1 հանգստացողի/աշխատողի ջրօգտագործման առավելագույն ծախսից.

$$V_y = n \times 200 \text{լ կամ } 0, 2 \text{մ}^3$$

Որտեղ՝ n - հանգստացողների/աշխատողների թիվն է՝ 20

Այսպիսով.

$$V_y = 20 \times 200 = 4000 \text{լ/օր կամ } 4,0 \text{մ}^3/\text{օր}:$$

3 սպասարկողի համար ջրածախսը կկազմի.

$$W=3*0.025=0,075\text{մ}^3/\text{օր}$$

Մեկ օրվա կտրվածքով ընդհանուր ջրօգտագործումն առավելագույն թվով հանգստացողների համար կկազմի $4,0\text{մ}^3/\text{օր}$ և $0,075\text{մ}^3/\text{օր}$ ՝ աշխատողների համար, ընդհանուր ջրօգտագործումը շահագործման փուլում կկազմի $4,075\text{մ}^3/\text{օր}$:

Շահագործման փուլում կեղտաջրերի արտահոսքը կկազմի.

$$W_{\text{կենց.կոյ.}}=W_{\text{կ.}}X(1-4)$$

Որտեղ,

$W_{\text{կ.}}X$ - շահագործման փուլում ջրածախսը

4 - կորուստները, ընդհանրացված 5 տոկոս (0.05),

Չետևաբար,

$$W_{\text{կենց.կոյ.}}=4,075 \times (1-0,05)=3,842 \text{ մ}^3/\text{օր կոյուղային արտահոսք շահագործման փուլում:}$$

Կենցաղային հոսքերը կոյուղու բակային ցանցով ինքնահոս եղանակով, պոլիէթիլենային և պոլիպրոպիլենե (1905 սիշից ներքև) և երկաթյա (1905 սիշից բարձր տարածքներում) խողովակներով հեռացվելու է դեպի մաքրման կայան: Մաքրման կայանից մաքրված ջրերը ջրահեռացման բակային ներքին ինքնահոս ցանցով հեռացվելու և օգտագործվելու են տարածքի կանաչապատ հատվածների ոռոգման նպատակով:

Քոթեջների տանիքներից անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը հեռացվելու են դեպի կանաչ տարածքներ:

Նյութեր. Շինարարության փուլում օգտագործվելու են նաև շինարարական նյութեր՝ սենդվիչ պանելներ, երեսապատման փայտ, վիտրաժային ապակի, տանիքի համար օգտագործվող մետաղական կղմինդր, արտաքին երեսապատման ներկեր և սալիկներ, տանիքի ձևավոր թիթեղ, մետաղական հեծաններ, ներքին հարդարման նյութեր: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից կամ մասնակի լինելու են արտասահմանյան:

Անհրաժեշտ շինանյութերը գործունեության վայր են բերվելու ըստ տեսակների և անհրաժեշտության, տեղադրվելու են տակդիրների վրա:

Շինարարության ընթացքում բացառվելու են ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը:

12.10 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ


Գործունեության կատարման շինարարության ժամանակաշրջանում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ: Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը.

- Բեռնատար ինքնաթափ -1 հատ
- Ավտոկռունկ -1 հատ
- Էլ. եռակցման սարք - ըստ պահանջի
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ:

Վերջիններս լինելու են Կապալառու կազմակերպության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաները կայանվելու են գործունեության տարածքին կից՝ ճանապարհի եզրին: Այն դեպքում, երբ շինարարական տեխնիկական կաշիատի գործունեության տարածքում, նախատեսվում է ավագի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:


Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Սխեմա 1



7 Ընդհապարակի կազմակերպման հատակագիծ 1:350

			ՊՍԱՎԻՐՍՏԻՌ Ռուբեն Մուկիսյան		
ԼՂԶ	Յ. Անդրեասյան	<i>Handwritten signature</i>	Սեզ հարկանի շարժական քրոնշենի նախագիծ՝ Սևանա լճի մոտ Ծովազարդ գյուղի Լճախյալ 12/3 հասցեում	Թեք	44
Կոնստրուկտոր	Ա. Դովլանդյան	<i>Handwritten signature</i>		ԱՆ	ՄԿ
Ճարտարապետ	Վ. Ավետիսյան	<i>Handwritten signature</i>	ՊՍԱՎԱԳԻԾ		
			"Հարչին Գախաղիժ" ՍՊԸ		



13. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի բնութագրերը

13.1 Օդային ավազան

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ հողային աշխատանքների ընթացքում՝ փոշու տեսքով և տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում՝ ծխազագերի տեսքով: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործունեության իրականացման ընթացքում շինարարական աշխատանքերը կրելու են ժամանակավոր բնույթ, քրթեջները տեղադրվելու են առանց փորման աշխատանքների, ուստի ազդեցությունը օդային ավազանի վրա կլինի նվազագույն և ժամանակավոր:

13.2 Հողային ռեսուրսներ

Քրթեջների տեղադրման ժամանակ հողային աշխատանքներ չեն կատարվելու: Քրթեջները սյուներով(երկաթյա ցից) խրվելու են հողային գրունտի մեջ: Հողային աշխատանքները կատարվելու են միայն մաքրման կայանի տեղադրման և

ջրամատակարարման և ջրահեռացման ստորգետնյա խողովակների անցկացման ժամանակ:

Հողային զանգվածն առաջանալու է ժամանակավոր կառույցների համար կետային(ցիցային) փորվածքներից և ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների անցկացման աշխատանքներից՝ 370մ³ ծավալով, որից 180մ³ բուսահող:

Հողային զանգվածից առանձնացվելու է 180մ³ բուսահողը: Հողային զանգվածը՝ 190մ³ ծավալով կուտակվելու է տարածքում անմիջապես փորված խրամուղիների երկայնքով և փորվածքների(հիմքեր) մոտ և խողովակների տեղադրումից հետո օգտագործվելու է հետլիցքի և հարթեցման համար: Բուսահողն ամբողջությամբ օգտագործվելու է տարածքների վերականգնման և բարեկարգման համար:

13.3 Ջրային ռեսուրսներ

Շինարարական աշխատանքների ժամանակ աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շէրով: Ջրցանի և տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում հանգստացողների համար խմելու ջուրը կմատակարարվի ջրամատակարարման համակարգից՝ շուրջօրյա:

13.4 Կեղտաջրերի հեռացում

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող 1,1x1.2մ չափերի 1 բիոզուգարանից՝ պատրաստված բարձր որակի պլաստիկից, որի առավելագույն տարողությունը կազմում է 200-250մ³: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է պարբերաբար, ելնելով լցվածության աստիճանից, համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջոցով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Անիվների լվացումից առաջացած հոսքաջրերը 150մ երկարության պլաստմասե խողովակներով ինքնահոս հեռացվելու են դեպի բիոզուգարան: Շինարարության փուլում արտադրական և անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերի հեռացման համար շինհրապարակում տեղադրվելու է վերգետնյա 150մ³ ծավալով պլաստմասե տարա: Հոսքաջրերը հեռացվելու են վերգետնյա խողովակներով: Տարայում հավաքված ջուրը կօգտագործվի շինարարության ընթացքում ջրցանի նպատակով, իսկ հավաքված նստվածքը (շինաղբ կամ տիղմ) ժամանակ առ ժամանակ կհեռացվի մասնագիտացված ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլում կեղտաջրերի հեռացման նպատակով տեղադրվելու է ռուսական արտադրության «ՅՈՒԲԱՍ 30» ԼՈԳՈ տեսակի 1 մաքրման կայան: «ՅՈՒԲԱՍ 30»-Լոգո տեսակի կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանը (ՄԿ) նախատեսված է տնտեսական կենցաղային կեղտաջրերի վնասազերծման համար: Առաջարկվող մաքրման կայանի արտադրողականությունն ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 6 մ³/օր և կարող է սպասարկել 30 մարդու: Այն ունի բարձր

հուսալիություն և աղմուկի շատ ցածր մակարդակ: Կայանի աշխատանքը ավտոմատացված է և շահագործման ընթացքում չի պահանջվում պրոֆեսիոնալ գիտելիքներ: Մաքրման համակցված մեթոդը (կենսաբանական և մեխանիկական) հնարավորություն է տալու կեղտաջրերի եռաստիճան և քառաստիճան՝ մինչև 98-99% մաքրում, պահպանելով շրջակա միջավայրի աղտոտումը կեղտաջրերից և ապահովել մարդկանց առողջության անվտանգության երաշխիքը:


Նախատեսված մաքրման կայանը համաձայն իր անձնագրային տվյալների՝ ապահովելու է կեղտաջրերի մաքրում այն աստիճան, որն համապատասխանելու է ձկնարդյունաբերական տնտեսության ջրերի որակին՝ թույլատրելի նորմերին:

Այն իրենից ներկայացնում է անջրթափանց, պլաստիկ տարողություն, որի արդյունքում կայանից դուրս է գալու անհոտ և անհամ տեխնիկական ջուր, կայանի ելքում ապահովելով մաքրված կեղտաջրերի հետևյալ ցուցանիշները.

Նյութերի անվանումը	Մինչև մաքրումը Մգ/լ	Մաքրումից հետո մգ/լ	Մաքրման %-ը
1. Թթվածնի քիմիական պահանջարկ՝ ԹԶՊ	350	18	95
2. Թթվածնի կենսաքիմիական պահանջարկ՝ ԹԿՊ 5	233	2,0	99
3. pH	7,7	7,5	-
4. Ազոտ	80	0,4	99
5. Նիտրիտներ/աղեր/	4,5	0,02	99
6. Նիտրատներ	50	9	82
7. Կիսաֆոսֆատներ	3,4	0,25	93
8. Անիոնների խառնուրդ	4	0,2	95

Կայանը համապատասխանում է ՌԴ ՏՊ–4859–002–54899623–2003 պահանջներին և լայն կիրառություն ունի Ռուսաստանում, Բելառուսիայում և այլ երկրներում: Նշված ցուցանիշները համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 22-ի՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N75-Ն՝ «ԿԱԽՎԱԾ ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՋՐԱՎԱՉՆԱՑՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 1211-Ն որոշման պահանջներին՝ Սևանա լճի ջրհավաք ավազանի համար սահմանված նորմերին:

Նկար 7.



Համաձայն «ՅՈՒԲԱՍ 30» ԼՈԳՈ՝ տեսակի կենսաբանական մաքրման կայանի տեխնոլոգիայի՝ այն ապահոված է չորս աստիճանի մաքրման համակարգով(թթվածնային և ոչ թթվածնային), որն ապահովելու է կեղտաջրերի բարձրաստիճան մաքրում, հատկապես ֆոսֆորի և ազոտի միացությունների հեռացման համար և կտրուկ նվազեցնում է նստվածքի քանակը: Մաքրված կեղտաջրերը (98%) թույլ կտա կայանից դուրս եկող ջուրը հեռացնել դեպի Սևանա լիճ կամ օգտագործել կանաչապատ տարածքի ոռոգման նպատակով:

Օդափոխման բաքում առաջանում է ակտիվացված տիղմ, որը կառուցվածքով շատ նման է գետի տիղմին և արժեքավոր պարարտանյութ է: Այն ժամանակ առ ժամանակ հեռացվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ընկերությունը կարող է տեղադրել նաև կեղտաջրերի նույնատիպ մաքրման աստիճան ապահովող այլ տեսակի մաքրման կայան:

Կայանի տեղադրման համար հիմք է ընդունվել կեղտաջրերի հաշվարկային ելքերը՝ (3,842մ³/օր) հանգստյան գոտում առավելագույն հանգստացողների և աշխատողների քանակի հաշվարկով:

Շահագործման փուլում հանգստյան գոտու տարածքում զուգարանների տեղադրում չի նախատեսվում: Վերջիններս լինելու են միայն քոթեջներում:

Շահագործման փուլում շինությունների տանիքներից անձրևաջրերը համապատասխան ջրահեռացման համակարգերով հեռացվելու են դեպի կանաչ տարածքներ:

13.5 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ. գործունեության ենթակա տարածքը անտառապատ չէ: Տարածքի հիմնական մասը ժայռային է ավազային ծածկով՝ տեղ- տեղ աճած տարախոտային բուսատեսակներով: Պայմանավորված մարդածին ազդեցություններով՝ տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները:

Կենդանական աշխարհ. գործունեության ենթակա տարածքը նախկինում օգտագործվել է որպես լողափ, ուստի արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Այդ պատճառով տարածքում չկան կենդանիների բնադրավայրեր, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չկան:

Ուստի բուսական և կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցություն չի լինելու:

13.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑԱԴՊԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ՝ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Ծովագարդի տարածքային հատվածում: Բուն գործունեության հատվածում պատմամշակութային և բնության հուշարձանները բացակայում են:

Ուստի հնարավոր ազդեցությունները վերջիններիս վրա բացակայում են:

Միաժամանակ՝ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

13.7 Թափոններ

Շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- կյուբերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ մոտ 100մ^3 ,
- կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 1440կգ/տարի, շահագործման փուլում՝ 7560կգ/տարի:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ: Այն թափոնները, որոնք հնարավոր կլինի խառնել կենցաղային աղբի հետ(կեղտոտված լաթեր և այլն) կտեղափոխվեն աղբավայր: Իսկ մետաղական մասերի և կյուբերի մնացորդները կտեղափոխվի Կապալառու կազմակերպության կողմից՝ համապատասխան կազմակերպություններին հանձնելու նպատակով: Շինարարության փուլում այլ տեսակի թափոնների կուտակում չի նախատեսվում:

Իսկ կենցաղային աղբը կուտակվելու է 1 հատ $1\times 1\text{մ}^3$ տարողության աղբահավաք տարողության մեջ: Կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու է մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Տեղադրվելու են նաև աղբի տեսակավորման աղբամաններ, մասնավորապես պլաստիկի և ապակյա տարանների համար, կնքվեն համապատասխան կազմակերպությունների հետ պայմանագրեր, ելնելով տեսակավորված աղբի պարունակությունից և քանակից:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տարի

n – աշխատողների թիվն է,

հետևաբար,

$$M=6*120=720\text{կգ/տարի կամ } 2,7\text{կգ/օր (աշխատանքային օրով՝ 264 օր)}$$

Շինարարությունը տևելու է 24 ամիս (2 տարի), հետևաբար

$$M=720*2= 1440\text{կգ/տ},$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

$$M=(20)*360 + 3*120=7560\text{կգ/տարի կամ } 20,7\text{կգ/օր:}$$

13.8 Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ կյուլթերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Աշխատանքի անվտանգության պահպանման նպատակով համալիրի կառուցապատման և շահագործման ընթացքում պահպանվելու են ՀՀ առողջապահության նախարարի 2007 թվականի փետրվարի 12-ի թիվ 236-Ն և նշված հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին 2021թ. մայիսի 12-ի N 36-Ն հրամանի, ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի ապրիլի 16-ի թիվ 06-Ն և նշված հրամանում 2020թ. ապրիլի 7-ի լրացում և փոփոխություններ կատարելու մասին N 11-Ն հրամանի պահանջները:

Աշխատողներն իրենց կենցաղ-սանիտարական պայմանները հոգալու և հանգստի կազմակերպման համար օգտվելու են տարածքում համապատասխան կահավորանքով ապահովված 12մ² մակերեսով տնակից: Շինարարության փուլի ավարտից հետո այն հեռացվելու է տարածքից:

13.9 Սոցիալական

Շինարարական աշխատանքներին ներգրավելու են 6 մարդ, որից 1 ինժեներ՝ մասնագետ և բանվորներ՝ 5 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման փուլ. Հանգստի գոտում հանգստացողների առավելագույն ծանրաբեռնվածությունը նախատեսվում է 23 մարդ, որից հանգստացողների թիվը՝ 20, պահակ՝ 2, տեխնիկական աշխատող՝ 1: Որպես աշխատող ներգրավվելու են հիմնականում համայնքի բնակիչները, որոնք տարածք են հասնելու սեփական տրանսպորտային միջոցներով:

13.10 Բարեկարգում և կանաչապատում

Հանգստյան գոտու կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, ճանապարհի կարգաբերում: Տարածքում նախատեսվում է խճաքարերով անցուղիների կառուցում՝ հետիոտնի տեղաշարժն ապահովելու համար:

Նախատեսվում է գործունեության ենթակա ազատ տարածքի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ սիզամարգի և տեղ-տեղ ծաղիկների՝ մասնավորապես վարդերի տեսքով: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է վերգետնյա պլաստիկ խողովակներով (ցնցուղային)՝ մաքրման կայանից դուրս եկող մաքրված հոսքաջրերով կամ չբավարարման դեպքում՝ Սևանա լճից՝ ջրօգտագործման թույլտվության դեպքում:

Ռոռզման նպատակով ջրապահանջը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$W = (M \times 20) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկություններից

հետևաբար,

$$W = 1211 * 20 * 4 = 96\ 880 \text{մ}^3 / \text{տարի ջուր}$$

14. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական (կառավարման) միջոցառումների ծրագիրը

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Սևանա լճի ռեկրացիոն գոտում, որն արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների: Գործունեության ենթակա տարածքը նախկինում արդեն օգտագործվել է որպես լողափ: Տարածքի կառուցապատումն իրականացվելու է այնպիսի նյութերով, որոնք չեն հակասի Սևանա լճի վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներով ամրագրված պահանջները՝ չխաթարելով տարածքի էկոհամակարգը և հարակից շրջակա միջավայրը: Շինարարության փուլի ավարտից հետո կիրականացվեն կանաչապատման աշխատանքներ:

Շահագործման փուլում գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի որոշակի ծանրաբեռնվածություն: Սակայն Սևանա լճի ռեկրացիոն գոտու ներկայիս հնարավորությունների օգտագործումն ունենալու է տարածաշրջանի համար որոշակի դրական ազդեցություն, քանի որ կխթանի էկոտուրիզմի, զբոսաշրջության զարգացմանը՝ ներքին այցելուների և օտարերկրացի զբոսաշրջիկների ներգրավելու առումով, հետևաբար և բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը (աշխատատեղ և բնակչության եկամուտների ավելացում):

Սևանա լճի մակարդակի բարձրացման և լճափնյա հատվածի ջրածածկման դեպքում քոթեջները կապամոնտաժվեն և կտեղափոխվեն համապատասխան նիշի հատված:

Գործունեության իրականացման հետևանքով հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն շինարարական աշխատանքների ժամանակ, սակայն վերջինները կլինեն կարճաժամկետ: Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմմանն ուղղված նախատեսվող միջոցառումների ճիշտ կիրառման արդյունքում՝ գործունեության իրականացման հետևանքները կլինեն նվազագույնը:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների, Սևանա լիճ

վտանգավոր նյութերի արտահոսքերի, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման, տարածքի կենսաբազմազանության պահպանման հետ:

Միջոցառումներում հաշվի են առնվել նաև հանրապետությունում կորոնավիրուսային համավարակով պայմանավորված իրավիճակը, շինարարական հրապարակներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-2019) կանխարգելմանն ուղղված պայմանների ապահովումը:

14.1 Օդային ավազան

Շինարարության փուլում գործունեության իրականացման հետևանքով օդային ավազան հնարավոր արտանետումները լինելու են ավտոտրանսպորտի շահագործումից՝ ծխագազերի, ինչպես նաև հողային աշխատանքների (փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվելու է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավացում և ճանապարհների ջրցան,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,

- գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը,

- տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ, փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար,

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:

14.2 Հողային ռեսուրսներ

Գործունեության իրականացման հետևանքով կատարվելու են հողային աշխատանքներ, որի արդյունքում առաջանալու է 180մ³ ծավալի բնահող: Հողային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունները և վերջինիս մեջ վտանգավոր նյութերի և քսայուղերի ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է հարակից ճանապարհին,

- ճանապարհից դուրս տեղակայվող սարքավորումների վայրում փռվելու է ավազ կամ մանրախիճ,

- բուն գործունեության տարածքում յուրյի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվելու,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում,
- Հողի բերրի շերտը հանվելու և պահվելու է համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջների: Մասնավորապես.
- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրվելու է խոշոր քարերից և այլ մնացուկներից,
- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները և պահեստավորվելու է՝ առանձին,
- բուսահողը ժամանակավորապես պահվելու է տարածքի առանձնացված վայրում, թմբերի տեսքով՝ ծածկված անջրթափանց թաղանթով,
- հնարավորինս բացառվելու է տարածքում առկա բուսահողի վրա հնարավոր ազդեցությունները՝ թափոններով և կեղտաջրերով աղտոտումը,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո բուսահողն օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով:

14.3 Ջրային ռեսուրսներ

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, ինչպես նաև Սևանա լիճ վտանգավոր նյութերի արտահոսքը բացառելու նպատակով նախատեսվում է.

- բացառվելու է Սևանա լճի բնական էկոհամակարգի խախտումները,
- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերի և արտադրական հոսքաջրերի հեռացման և հավաքման համար նախատեսվելու է պլաստմասե տարա,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը պատրաստելու են մետաղական տարրաների մեջ՝ ջրային ռեսուրսների մեջ հոսքաջրերի ներթափանցումը կանխելու նպատակով,
- բետոնախառնուրդի համար օգտագործվելու է տեխնիկական ջուր:

Շինարարության փուլում կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.

- Սևանա լիճ կեղտաջրերի արտահոսքը կանխելու նպատակով շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից,
- բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շահագործման փուլ՝

- ապահովվելու է հանգստացողների անվտանգ մոտեցումները դեպի լիճ,
- լողափի գոտում բացառվելու է բաժանիչ պարիսպների կամ ցանկապատերի տեղադրումը:

Կեղտաջրերի հեռացումը և մաքրումը կատարվելու է բացառապես մաքրման կայանի միջոցով: Այդ նպատակով տեղադրվելու է «ՅՈՒԲԱՍ 30» ԼՈԳՈ տեսակի 1 մաքրման հատ երաշխավորված կենսաբանական մաքրման կայան, որն ապահովվելու է.

- ԹԿՊ-2 մգ/լ, նիտրիտներ-0.02 մգ/լ, նիտրատների ազոտ-9.0 մգ/լ, կիսաֆոսֆատներ-0,25 մգ/լ, անիոնների խառնուրդ-0.2 մգ/լ, pH-7.5 սահմաններում և ունի նորմերին համապատասխանություն:

14.4 Կենսաբազմազանություն

Գործունեության իրականացման ենթակա և հարակից տարածքներն արդեն ենթարկվել են մարդկային ազդեցության: Կենսաբազմազանության վրա ազդեցությունը մեղմելու նպատակով.

- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցվելու են շինարարական աշխատանքները և տեղեկացնելու են «Սևան»ԱՊ-ին,

- շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- բացառվելու են հողերի պարարտացման նպատակով քիմիական միջոցների և պարարտանյութերի օգտագործումը,

- հնարավորինս նվազեցնելու են տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:

14.5 Թափոններ

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ, որոնց հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,

- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորում չի նախատեսվում,

- շինարարական թափոնները՝ շինադժ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և Կապալառու կազմակերպության կողմից պարբերաբար կտեղափոխվեն,

- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից,

- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,

- բացառվելու է աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ հարակից և այլ հասարակական տարածքներում:

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, ինչպես նաև մետաղական մասերը և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և հեռացվելու է Կապալառուի կողմից:

14.6 Աղմուկ և թրթռում

Շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները:

14.7 Արտակարգ իրավիճակներ

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով.

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով կամ շանթարգելներով,

- շահագործման փուլում տեղադրվելու են կրակմարիչներ՝ հրդեհաշիջման աշխատանքների ապահովման համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

14.8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,

- աղբի տեղափոխումից հետո կոնտեյները լվացվելու և ախտահանվելու է, /հիմք ընդունելով առողջապահության նախարարի 2010 թվականի հուլիսի 16-ի թիվ

13-Ն հրամանով հաստատված (հավելվածի 5-րդ և 24-րդ կետեր)/ ախտահանիչ միջոցներով,

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն),

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու է 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,

- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ), որը ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (վազարան, աթոռ, սեղան և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ,

- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու է մեքենաների կոլտակումները,

- նվազագույնի է հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով:

Շահագործման փուլ.

- հանգստյան գոտին ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով,

- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ միջոցներով, դեղարկղիկով:

14.9 Սոցիալական

Հանգստյան գոտու կառուցումն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն՝ կնպաստի.

- համայնքի՝ որպես հանգստյան և զբոսաշրջության գոտու ընդլայնմանը՝ կիրթանի զբոսաշրջիկների նոր հոսքին,

- նպաստելու է ՀՀ-ում զբոսաշրջության զարգացմանը:

14.10 Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում

Տարածքի լանդշաֆտի վրա մեծ ազդեցություն ունի Սևանա լճի մակարդակի իջեցումը: Նշված տարածքն արդեն գտնվում է մարդկային գործունեության ազդեցության գոտում: Գործունեության իրականացումը կառաջացնի լանդշաֆտի որոշ ծանրաբեռնվածություն, բայց լանդշաֆտի փոփոխություն չի առաջացնի, քանի որ գործունեությունն իրականացվելու է ժամանակավոր կառույցներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է լանդշաֆտը,

- պահպանվելու է լճի բնական Էկոհամակարգը,
- կատարվելու է գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Կանաչապատում.

- կանաչապատման աշխատանքները կատարվելու են սիզամարգի և ծաղիկների (վարդեր և տեղանքին բնորոշ այլ ծաղիկներ) տեսքով:

14.11 Սոսիթորիևզ

Շինարարության ընթացքում ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցումը բացառելու նպատակով.

- կատարվելու է Սևանա լճի ջրի և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրություններ,
- խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- շինանյութերը գնվելու են արտոնագրված մատակարարներից, բացառելով ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը,
- տարածքը կառուցապատվելու է ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման՝ Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագծի պահանջներին համապատասխան,
- ապահովվելու է հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան,
- թափոնների տեղափոխումը կազմակերպվելու է համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- ապահովվելու է շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակը,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի

հայտնաբերման դեպքում դադարեցվելու է շինարարական աշխատանքները և տեղեկացնելու է «Սևան»ԱՊ-ին,

- շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար:

- պահպանվելու է շինարարության իրականացման ժամանակացույցը:

Գործունեության իրականացման ժամանակշրջանում նախատեսվում է հատկացնել տարեկան 350,0 հազար ՀՀ դրամ՝ ուղղված շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների մեղմա

15. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

<p align="center">1</p>	<p>Օդային ավազան</p>	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, -բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը, - գործունեության վայր շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում օգտագործվող նյութերի և թափոնների քանակը, - տարածքում նույնպես պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով կամ ժամանակավոր ծածկի տակ՝ փոշու հնարավոր տարածումից խուսափելու համար, 	<p align="center">Կապալառու</p>	<p align="center">Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «Սևան»ԱՊ</p>
--------------------------------	-----------------------------	---	--	--

		- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:		
2	Հողային ռեսուրսներ	<p>Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական տեխնիկական ժամանակավոր կայանվելու է հարակից ճանապարհին, - բուն գործունեության տարածքում յուղի, վառելիքի կամ այլ վտանգավոր հեղուկների պահման տեղամասեր չեն նախատեսվում, - շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների վրա, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - նվազագույնի է հասցվելու բաց փորվածքների քանակությունը և վերջիններիս հետլիցքն իրականացվելու է հնարավորինս կարճ ժամկետներում, - Հողի բերրի շերտը հանվելու և պահվելու է համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջների, 	Կապալառու	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «ՍԼԱՆ»ԱԴ

		<ul style="list-style-type: none"> - նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը մաքրվելու է խոշոր քարերից, - հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները և պահեստավորվելու է առանձին, - բուսահողը ժամանակավորապես պահվելու է տարածքի առանձնացված վայրում, թմբերի տեսքով՝ ծածկված անջրթափանց թաղանթով, - հնարավորինս բացառվելու է տարածքում ամկա բուսահողի վրա հնարավոր ազդեցությունները՝ թափոններով և կեղտաջրերով աղտոտումը, - շինարարական աշխատանքների ավարտից հետո բուսահողն օգտագործվելու է տարածքի բարեկարգման և կանաչապատման նպատակով: 		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման շինարարության փուլում Սևանա լճի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմվելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - բացառվելու է Սևանա լճի բնական էկոհամակարգի խախտումները, - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - անձրևաջրերի և արտադրական հոսքաջրերի հեռացման համար նախատեսվելու է պլաստմասե տարա, 	Կապալառու	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «Սևան»ԱԴ

	<p>Շահագործման փուլ</p>	<ul style="list-style-type: none"> - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համայնքում գործող մասնագիտացված կետերում, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը պատրաստելու են մետաղական տարրաների մեջ՝ ջրային ռեսուրսների մեջ հոսքաջրերի ներթափանցումը կանխելու նպատակով, - բետոնախառնուրդի համար օգտագործվելու է տեխնիկական ջուր: <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> - Սևանա լիճ կեղտաջրերի արտահոսքը կանխելու նպատակով շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող բիոզուգարանից, - բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքով: <ul style="list-style-type: none"> -ապահովվելու է հանգստացողների անվտանգ մոտեցումները դեպի լիճ, - լողափի գոտում բացառվելու է բաժանիչ պարիսպների կամ ցանկապատերի տեղադրումը: <p>Շահագործման փուլում տեղադրվելու է.</p> <ul style="list-style-type: none"> -«ՅՈՒԲԱՍ 30» ԼՈԳՈ տեսակի 1 հատ մաքրման կայան, որն ապահովվելու է. 		
--	--------------------------------	--	--	--

		- ԹԿՊ-2 մգ/լ, նիտրիտներ-0.02 մգ/լ, նիտրատների ազոտ-9.0 մգ/լ, կիսաֆոսֆատներ-0,25 մգ/լ, անիոնների խառնուրդ-0.2 մգ/լ, рН-7.5 սահմաններում և ունի նորմերին համապատասխանություն:		
4	Կենսաբազմազանություն	Գործունեության և հարակից տարածքների կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է . - գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում դադարեցվելու են շինարարական աշխատանքները և տեղեկացվելու են «Սևան»ԱՊ-ին, - բացառվելու են հողերի պարարտացման նպատակով քիմիական միջոցների և պարարտանյութերի օգտագործումը, - շինարարական աշխատանքներն իրականացվելու են բացառապես ցերեկային ժամերին՝ որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար, - հնարավորինս նվազեցվելու են տարածքի գիշերային լուսավորությունը՝ կենդանիների որոշ տեսակների բնականոն վարքին չխանգարելու նպատակով:	Կապալառու	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «Սևան»ԱՊ
5	Թափոններ	Թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.	Կապալառու	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան

		<p>- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,</p> <p>- շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինարարական թափոնների պահեստավորում չի նախատեսվում,</p> <p>- շինարարական թափոնները՝ շինադր, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և Կապալառու կազմակերպության կողմից պարբերաբար կտեղափոխվի,</p> <p>- շինարարության ժամանակ առաջացած աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու են մասնագիտացված կազմակերպությունների կողմից,</p> <p>- կենցաղային աղբի հեռացվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,</p> <p>- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,</p> <p>- բացառվելու է աղբի կուտակումը շփիրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում,</p>		<p>«Սևան»ԱԴ</p>
--	--	--	--	------------------------

		<p>- Շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և հեռացվելու են Կապալառուի կողմից:</p>		
6	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,</p> <p>- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,</p> <p>- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները:</p>	Կապալառու	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «Սևան»ԱՊ
7	Արտակարգ իրավիճակներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.</p> <p>- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով,</p>	Կապալառու	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «Սևան»ԱՊ

		<ul style="list-style-type: none"> - շահագործման փուլում տեղադրվելու են կրակմարիչներ՝ հրդեհաշիջման աշխատանքների ապահովման համար, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են, - հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար: 		
8	Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	<p>Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողներն, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), - շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 	Կապալառու	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «Սևան»ԱՊ

	<p>Շահագործման փուլ.</p>	<p>արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,</p> <ul style="list-style-type: none"> - աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ), որը ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան և այլն), - շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ, - վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, - նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը փակ տարածքներում: - հանգստյան գոտին ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, 		
--	---------------------------------	--	--	--

		<p>հակահրդեհային միջոցներով՝ , կրակմարիչներով, - աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ միջոցներով, դեղարկղիկով:</p>		
9	Սոցիալական	<p>Հանգստյան գոտու կառուցումն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն. - համայնքի՝ որպես հանգստյան և զբոսաշրջության գոտու ընդլայնմանը, կիսթանի զբոսաշրջիկների նոր հոսքին, - նպաստելու է ՀՀ-ում զբոսաշրջության զարգացմանը:</p>	Կապալառու	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «Սևան»ԱՊ
10	Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում	<p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում. -շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է լանդշաֆտը, - պահպանվելու է լճի բնական էկոհամակարգը, - կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ. Կանաչապտում.</p>	Կապալառու	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «Սևան»ԱՊ

		- կանաչապատման աշխատանքները կատարվելու են սիզախոտի տեսքով:		
--	--	--	--	--

3	Աշխատանքի անվտանգություն	<p>- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն</p> <p>- հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան:</p>	Գործունեության իրականացման ենթակա տարածքում	Ստուգումներ	Շինարարության ընթացքում	Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան «Սևան»ԱՊ
4	Նյութեր	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից, բացառելով ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի «Սևանա լճի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի, կենսածին տարրերի, ծանր մետաղների կամ դրանց միացությունների և այլ նյութերի ցանկը հաստատելու մասին» N 57 որոշմամբ ամրագրված նյութերի օգտագործումը:	Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ	Մատակարարման ընթացքում	Շինարարության փուլում	Կապալառու Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան
5	Թափոն	Թափոնների կանոնավոր տեղափոխում:	Գործունեության ենթակա տարածքից	համապատասխան պայմանագրերի հիման վրա	Շինարարության ընթացքում	Կապալառու Լիազորված անձ՝

						Տիգրան Ասլանյան
6	Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ	- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում, - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղման իրականացում:	շինհրապարակ	- շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:	Շինարարարական աշխատանքների կատարման ընթացքում	Կապալառու Լիազորված անձ՝ Տիգրան Ասլանյան


Գրականություն

1. СП 31.13330.2012 ՍՆԻՊ 2.04.02-84* Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառույցներ:
2. ՀՀ կառավարության 01.12.2005թ. N 2128-Ն որոշում:
3. «Կենսաբանական բազմազանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ ազգային զեկույց:
4. ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-0 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
5. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնքի 2017-2021թթ.-ի զարգացման ծրագիր:
6. «Սևան»ԱՊ-ի կառավարման պլան:
7. ՀՀ կառավարության 30.09. 2020թ. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնական զարգացման և օգտագործման 2020թ.միջոցառումների տարեկան ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1293-Լ որոշում:
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 9 սեպտեմբերի 2020 թ. ք. Երևան N 335-Ն Հ Ր Ա Մ Ա Ն «ՌԵԿՐԵԱՑԻՈՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
9. «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային կայք <http://armmonitoring.am/#home>
10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ Ռ Ա Զ Մ Ա Կ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն:

Հավելվածներ

Հավելված 1.

Լիազորագիր



ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՔՍԱՆ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՏԱՍՆՈՒԹ
ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆՁ, ԱՄՆ

Ես՝ ՌՈՒԲԵՆ ՀԱՅԿԱԶԻ ՄՈՎՍԻՍՅԱՆՍ, ծնված՝ 27-ը փետրվարի 1963թ., ՀՀ Անձնագիր՝
BA3453776, տրված՝ 01-ը օգոստոսի 2019թ. 202-ի կողմից, բնակվող՝ ԱՄՆ. Կալիֆորնիա Նահանգ, 10339
Roscoe Blvd., Sun Valley, CA 91352 հասցեում,

լիազորում եմ ՏԻԳՐԱՆ ՊԱՐԳԵՎԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ծնված՝ 01-ը հունվարի 1970թ. ՀՀ
Անձնագիր՝ AS0375975, տրված՝ 24-ը սեպտեմբերի 2018թ., 012-ի կողմից, բնակվող՝ ՀՀ, Արարատի մարզ,
գյուղ Այգեգարդ, Չկալովի փողոց, տուն 23/1 հասցեում,

լինել իմ ներկայացուցիչը ՀՀ բոլոր պետական և ոչ պետական մարմիններում և
կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, ցանկացած ֆիզիկական և
իրավաբանական անձանց հետ հարաբերություններում, իմ անվամբ ցանկացած ֆիզիկական,
իրավաբանական անձից, տեղական ինքնակառավարման մարմնից, ցանկացած եղանակով /ուղղակի
վաճառքով կամ հրապարակային սակարկություններով/ ձեռք բերել, գնել, սեփականաշնորհել,
վարձակալել ցանկացած հողատարածք, այլ անշարժ գույք՝ բնակելի և հասարակական, մասնավորապես
զբաղվել հետևյալ անշարժ գույքի վարձակալության հետ կապված բոլոր տեսակի հարցերով՝
ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ծովագարդ գյուղի ափամերձ հատված (Անշարժ գույքի
վարձակալության իրավունքի գրանցման Վկայականի համարը՝ 0065255) ստորագրել,
հրապարակային սակարկությունների այդուրեքների արձանագրություններ, ցանկացած այլ
արձանագրություն, հանդես գալ իմ անունից նոտարական գրասենյակում, ՀՀ կադաստրի կոմիտեում, կենտրոն
և ստորագրել առուվաճառքի պայմանագիր, նախնական պայմանագիր, վարձակալության պայմանագրեր
վճարել նախավճար /կանխավճար/, հանդես գալ անշարժ գույք չափազորող լիցենզավորված
կազմակերպություններում՝ կապված հողի սեփականաշնորհման /զեման/, ՀՀ անշարժ գույքի նկատմամբ
փաստաթղթերի ձևակերպման, չափազորման հետ, սեփականաշնորհման օրիականացման հետ,
անհրաժեշտության դեպքում ստանալ շինարարության թույլտվություն, ճարտարապետա-հատակագծային

-1-
Հաստատված է
ՀՀ կառավարության 2007թ.-ի
ապրիլի 27-ի թիվ 844 որոշմամբ
24

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 836

Պետական սեփականություն հանդիսացող հողամասի
կառուցապատման իրավունքի տրամադրման մասին

ՀՀ Գեղարքունիքի մարզ ք. Սևան «07» Սեպտեմբերի 2007թ.

Հայաստանի Հանրապետություն՝ ի ղեկն «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Տիգրան Գրիգորյանի,
(պետական մարմնի կամ պաշտոնատար անձի ազգանունը, անունը պաշտոնը)
որը գտնվում է կանոնադրության համաձայն, մի կողմից, այսուհետ՝
(օրենքի, կանոնադրության, լիազորագիր)
սեփականատեր և կառուցապատման իրավունք ունեցող անձ՝ ի ղեկն
Քաղաքացի Անդրանիկ Գալստյանի՝ բնակվող
(ազգանունը, անունը, պաշտոնը)
Գեղարքունիքի մարզ, գ. Օժվազար, անձ. ԱԲ 0441731 տրվ. 10.12.99թ., 040
(կանոնադրության, լիազորագիր)

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի N 286 որոշման, մրցույթի արդյունքների մասին թիվ 697 արձանագրության և ՀՀ կառավարության 2006թ. 27-րդ ապրիլի թիվ 844-Ն որոշման հիման վրա կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

I Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրով սեփականատերը պարտավոր է վճարի դիմաց կառուցապատման իրավունք ունեցող անձին տրամադրել հողամաս, որը գտնվում է Օժվազարո համայնքի ակամեռո հատված տրամադրվող հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 4800 (չորս հազար ութ հարյուր) քա.մ.
- 1.2. Սույն պայմանագրի գործողության ընթացքում կառուցապատված հողամասի օգտագործման արդյունքում կառուցապատման իրավունք ունեցող անձի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:
- 1.3. Տրամադրվող հողամասի սեփականատերը պետական սեփականություն է, ինչը հաստատվում է հետևյալ փաստաթղթերով՝ ՀՀ հողային օրենսգրքի և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ:
- 1.4. Սեփականատերը երեշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված հողամասը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման, այլ անձանց կառուցապատման իրավունքով տրված կամ այլ կերպ ժանրաբեռնված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:
- 1.5. Սեփականատիրոջ կողմից տրամադրված հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի հիմք չէ սույն պայմանագիրը լուծելու կամ փոխելու համար:
- 1.6. Սույն պայմանագիրը համապատասխանում է ՀՀ կառավարության 18 հունվարի 2007թ. թիվ 205-Ն որոշման և «Սևան» ազգային պարկի 2007-2011թթ. կառավարման պլանի տնտեսական և ռեկրեացիոն գոտու պահանջներին:

II Պայմանագրի ժամկետը

Կառուցապատման իրավունքի ժամկետը սահմանվում է 2007թ. (եղևու հազար ութ) սեպտեմբերի 07-ից (ութ) մինչև 2032թ. (երկու հազար երեսուներկու) սեպտեմբերի 07-ը (ութ):

III Հատուկ Պայմանները

- 3.1. Հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքի տրամադրումը չի հանգեցնում դրա նկատմամբ սեփականության իրավունքով փոխանցման:
- 3.2. Կառուցապատման ժամկետի ավարտից հետո կառուցապատման իրավունք ունեցող անձը պարտավոր է հողամասը (բացառությամբ բաժանելի բարելավումների) հաշվի առնելով բնականոն վատթարացումը, ակտով հանձնել հողամասի սեփականատիրոջը:
- 3.3. Կառուցապատման իրավունքի ժամկետի ավարտից հետո կառուցապատման իրավունք ունեցող անձի կատարած անբաժանելի բարելավումները չեն հատուցվում:



ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆԷԻ ԱՌՈՒՎԱՃԱՌԵԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երկու հազար քսան թվականի օգոստոսի երեք
Գեղարքունիք Սևան ք. 03/08/2020

ԱՆՂՐԱՆԿ ԲԱՂՇԻ ԳԱՆՈՅԱՆԸ, ծնված՝ 26/09/1964թ-ին, ՀԾՀ՝ 3609640265, նույնականացման քարտ՝ 004662268, տրված՝ 001-ի կողմից, 23/06/2014թ-ին, հաշվառված՝ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ, ԾՈՎԱԶԱՐԴ, ՀԱՂԹԱՆԱԿԻ Փ., 2 Տ հասցեում, այսուհետ «**Վաճառող**» մի կողմից և **ՌՈՒԲԵՆ ՀԱՅՎԱՉԻ ՍՈՎՍԻՍՅԱՆԸ**, ծնված՝ 27/02/1963թ-ին, ՀԾՀ՝ 3702630686, կենսաչափական անձնագիր՝ BA3453776, տրված՝ 202-ի կողմից, 01/08/2019թ-ին, այսուհետ այսուհետ «**Գնորդ**», որի անունից ԱՄՆ, Կալիֆորնիա Նահանգի Լոս Անջելես օկրուգի Նոտար /լից.2185128/ Արուսյան Վերոնիկայի կողմից 28/03/2020թ.-ին վավերացված լիազորագրով հանդես է գալիս **ՏԻԳՐԱՆ ՊԱՐԳԵՎԻ ԱՍԼԱՆՅԱՆԸ**, ծնված՝ 01/01/1970թ-ին, ՀԾՀ՝ 1101701919, անձնագիր՝ AS0375975, տրված՝ 012-ի կողմից, 24/09/2018թ-ին, հաշվառված՝ ԱՐԱՐԱՏ, ԱՅԳԵԶԱՐԴ, ԶՎԱԼՈՎԻ Փ., 23/1 Տ հասցեում, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

- 1.1. Վաճառողը վաճառում է ՀՀ Գեղարքունիքի մարզ, համայնք Ծովազարդ, Լճափնյա փող., 12/3 /տասներկու/երեք/ հողամաս հասցեում գտնվող 0,48 (զրո ամբողջ քառասունութ) հա մակերեսով հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը, իսկ գնորդը ձեռք է բերում կառուցապատման իրավունքը և վճարում է սույն պայմանագրով որոշված գինը:
- 1.2. Կառուցապատման իրավունքը պատկանում է Վաճառողին՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 26/05/2020թ.-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26052020-05-0050 վկայականի:
- 1.3. Սույն պայմանագիրը կնքելու պահին կառուցապատման իրավունքը վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ, երրորդ անձանց որևէ այլ իրավունքով ծանրաբեռնված չէ, արգելանքի տակ չի գտնվում, համաձայն ՀՀ կադաստր կոմիտեի կողմից 31/07/2020թ.-ի թիվ US-31072020-05-0100 միասնական տեղեկանքի:
- 1.4. Համաձայն 07/03/2007թ.-ին թվականին կնքված և ՀՀ Սևան նոտարական տարածքի Նոտարի կողմից 11/10/2007թ.-ին գրանցամատյանի թիվ 2095 համարով վավերացված «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» պայմանագրի, կառուցապատման իրավունքի ժամկետը սահմանված է մինչև 07/09/2032թ.-ը:
- 1.5. Սույն պայմանագրով կառուցապատման իրավունքի ծագման պահից Գնորդին է փոխանցվում 11/10/2007թ.-ին թվականին ՀՀ Սևան նոտարական տարածքի Նոտարի կողմից գրանցամատյանի թիվ 2095 համարով վավերացված «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» պայմանագրով սահմանված կառուցապատման իրավունք ունեցող անձի իրավունքներն ու պարտականությունները:
- 1.6. Կառուցապատման իրավունքի օտարման համար առկա է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿի համաձայնությունը՝ տրված 08/06/2020թ.-ին թիվ 25-839 գրույթամբ:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 2.1. Կառուցապատման իրավունքի վաճառքի գինը որոշված է կողմերի համաձայնությամբ և կազմում է 500,000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:
- 2.2. Պայմանագիրը կնքելու պահին վաճառողը հայտարարեց, որ ստացել է սույն պայմանագրով որոշված կառուցապատման իրավունքի վաճառքի գինը կանխիկ վճարումով և ամբողջությամբ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.2. Վաճառողը պարտավոր է.

3.2.1. պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկ օրացույցային օրվա ընթացքում հանձնման-ընդունման ակտով Գևորգին փոխանցել սույն պայմանագրում նշված Կառուցապատման իրավունքը:

3.2.2. Կառուցապատման իրավունքը հանձնելու հետ միաժամանակ գևորգին հանձնել դրա հետ կապված բոլոր փաստաթղթերը և այլ պատկանելիքները:

3.2.3. Գևորգին հանձնել 3-րդ անձանց իրավունքներից ազատ Կառուցապատման իրավունք:

3.3. Գևորգը պարտավոր է վճարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված Կառուցապատման իրավունքի համար:

3.4. Վաճառողն իրավունք ունի պահանջել վճարել սույն պայմանագրին համապատասխան հանձնված կառուցապատման իրավունքի գինը, իսկ չվճարելու դեպքում պահանջել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսների վճարում:

3.5. Գևորգն իրավունք ունի հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց, եթե վաճառողը սահմանված ժամկետում չի հանձնել կառուցապատման իրավունքը, դրա հետ կապված պատկանելիքները և փաստաթղթերը:

3.6. Կողմերը կրում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ կառուցապատման պայմանագրից բխող այլ իրավունքներ և պարտականություններ:

4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն պայմանագրով սահմանված կառուցապատման իրավունքը ծագում է ՀՀ կադաստրի կոմիտեում այդ իրավունքի գրանցման պահից:

4.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, իսկ ծագած վեճերը լուծվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ, համաձայնության չգալու դեպքում դատական կարգով:

4.3. Սույն պայմանագիրը կնքված է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

4.4. Պայմանագիրը նոտարի կողմից ընթերցվեց բարձրաձայն, պարզաբանվեց սույն պայմանագրի էությունը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Կողմերը հայտարարում են, որ պայմանագրի պայմանները հասկանալի են և համապատասխանում են իրեն իրական մտադրություններին:


ՎԱՃԱՌՈՂ *Գուրգյան Մուշեղի*
ԳՆՈՐԴԻ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ՝ *Մալանյան Միգրան*

Երկու հազար քսան թվականի օգոստոսի երեք
Սույն պայմանագիրը վավերացված է իմ «Գեղարքունիքի մարզ» նոտարական տարածքի
նոտար՝ ՎԱՐԴՈՒՇԻ ԲԱԲԻԿԻ ՍԱՐՈՅԱՆԻ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ
ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև
կառուցապատման իրավունքի նկատմամբ **ԱՆԴՐԱՆԻԿ ԲԱՂՇԻ ԳԱՆՈՑԱՆԻ** իրավունքները
ստուգված են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 204.1 հոդվածի և «Գույքի նկատմամբ
իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի համաձայն, սույն պայմանագրից
ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստր կոմիտեում՝ նոտարական
վավերացման օրվանից երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:
ԳՐԱՆՑՎԱԾ Ե ՍԵՐՏԻԿԱՆԱՑՄԱՆՈՒՄ 2150-ով

Գանձված է պետական տուրք՝ երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ
դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների:

Նոտար *[Ստորագրություն]* Վարդուհի Բաբիկի Սարոյան





5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Կառուցապատման իրավունքի ժամկետը՝ 07.09.2032թ.: Կառուցապատման տարածքի մակերեսը հաշվարկված է ալիքի ազդեցության գոտուց 1900 մ. վերև ընկած հատվածում:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Արսեն Մալխասյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր


ՎԿԱՅԱԿԱՆ N 06082020-05-0001, գաղտնաբառ՝ LHCYR9HE26K1

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-codastre.am կայքէջի միջոցով



Ճարտարապետահատակագծային առաջադրանք

Ձև N 1-2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Գեղարքունիքի Ծովագարող
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾՄԱՅԻՆ ԱՌԱՋԱՂՐԱՆՔ)

N 03/21
 05 օգոստոսի 2021 թ.

Օբյեկտ նոր կառուցվող հանգստի գոտի

(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

(հավիճակ բնորոշումը, հզորությունը)
նախագծային փաստաթղթերի մշակման համար:

չորրորդ փուլային աստիճան

ժխականության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագարող Լճամիջա փողոց թիվ 12/3

(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Ռուբեն Հակագի Մովսիսյան

(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, քննադատության վայրը, հետախուսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը կառուցապատողի հայտ

կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը մեկ տարի, նախագծման փուլը աշխատանքային

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

(աստղանիշով () նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ակտի տիտենայով՝ Մ 1:500)*

- Հողամասը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագարող համայնքի վարչական տարածքում գտնվող ոչ ափամերձ հատվածում, նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածք
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
- (*) Հողամասի չափերը 0.48 հա
(հողամասի սահմանները կողողինատային նշանարմամբ, մակերեսը (հա))
- Հողամասի առկա վիճակը Չկառուցապատված միջին թերություններով չճարապատված տարածք
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այդ բոլոր՝ բանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարելավումը և այլն)
- (*) Տրանսպորտային պայմանները Տարածքի մուտքը՝ Երևան-Սևան-Գավառ

5. (*) Ինժեներական ցանցեր
և սարքավորումներ (ջրամատակարարման,
կյուղու, գազամատակարարման, տաք ջրի
մատակարարման,
էլեկտրամատակարարման, էլեկտրոնային
հաղորդակցության համակարգեր)

Քաղաքային են

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական
ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

«Սևան» ԱՊ-ի հողատարածքներ

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն
ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ)
պատմամշակութային հուշարձանների
տարածքներ (պահպանական գոտիներ)

ՀՀ Կառավարության 18.12.2008թ. N 1563-Ն

դրոշմամբ սահմանված 2-րդ

ենթազույգ

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ չկան

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների,
ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների
նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող
ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային
պահանջներ

Նախագծել 6 շարժական բոթեջներ սպասարկման ու
տնտեսական շինություններ 22 Կառավարության 2008թ.
դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն, 2001թ. 24 սեպտեմբերի թիվ
896 որոշումների պահանջներին և կառուցապատման
սխեմային համապատասխան: Խարածքի բարեկարգումը
նախագծել՝ պահպանելով գործող նորմերը: Հողամասի
հիմնական մասը սեյսմիկ միկրոշրջանաճանաչված քարտեզով
գնահատվում է $A=0,4-0,6$ մ/վ²

(Ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական
փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի
դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող)
քաղաքաշինական միջավայրի պայմաններից, առաջարկություններ ձևակերպելով
ծնվող մաս, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և
գունային լուծումների վերաբերյալ)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը
կարմիր գծից (մետր)

Ըստ գործող նորմերի

9.2. (*) հեռավորությունը հարևան
հողակտորներից (օբյեկտներից)
(մետր)

Ըստ գործող նորմերի

9.3. թույլատրելի բարձրությունը
(մետր)

Առավելագույնը մեկ հարկ՝ 7.0 մ

9.4. կառուցապատման խտության
գործակիցը (կառուցի (կառույցների)
ընդհանուր մակերեսի
հարաբերությունը հողամասի
մակերեսին)

0.1 %

9.5. կառուցապատման տոկոսը

20 %

(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%))

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%)) 80 %

9.7. այլ պահանջներ _____

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը չկան

11. Ստորգետնյա, կիսանկողի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները համաձայն նախագծի

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ Համաձայնեցնել սպասարկող կազմակերպությունների հետ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում Կցվում է ջրամատակարարումը՝ անհատական՝ բեխրովի, կոյուղին՝ նախատեսել մաքրման կայան հանգստագոտների բանակի հաշվարկով / ՀՀ Կառավարության 01.12.2005թ. թիվ 2128-Ն որոշում/
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) էլեկտրամատակարարում Կցվում է ըստ «--» ----- 2014թ. ՀՅԾ կողմից տրված տեխ. պայմանի
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) գազամատակարարում Կցվում է չի նախատեսվում
(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը Կցվում է բազակալում են
(համաձայն N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)

12.5. թույլ հոսանքներ չի նախատեսվում

12.6. աղբահանություն ըստ համայնքի հետ կնքած պայմանագրի

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում հնարավորինս պահպանել բնական լանդշաֆտը
(ոբլիեֆի կազմակերպման, ջրաիտացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման պահանջներին համապատասխան
(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, զովազդ և այլն)

15. Շինարարական նյութեր Շստ նախագծի
(շինարարական նյութերի օգտագործման առաջարկությունները տանիքների, ճակատների լուծումների, արտաքին դռների, պատուհանների վերաբերյալ)

16. Պաշտպանական կառույցներ

Հի նախատեսվում
(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

Ըստ գործող օրենսդրության
(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.10.2006թ. թիվ 253-Ն հրամանով

19. Շրջակա միջավայրի պահպանում

Ըստ գործող օրենսդրության
(շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

20. Շինարարության կազմակերպում

Նախատեսել շին. աշխատանքների կազմակերպման նախագիծ և օրագրագային գրաֆիկ
(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխախտ աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

Ժամկետը՝ երկու տարի, նախագծման փուլը՝ աշխատանքային
(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Ենթարկել բնապահպանական փորձաքննության
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Հի նախատեսվում
(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էքզիզային նախագծի նախնական համաձայնեցում, նշվում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 87-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

ՀՀ Կառավարության 1998թ. հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշմամբ սահմանված կարգով
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում


(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

Ըստ գործող օրենսդրության

27. Այլ պայմաններ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԾՈՎԱԶՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ԱՐԱՄՄՅՈՒ ԵՆԳՈՅԱՆ


(ստորագրությունը, անունը, ազգանունը)

4. S



Ֆակելված 5.

Սևան ազգային պարկի և նրա պահպանական գոտու տարածքում հաշվառված պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ





լ/ա Տիգրան Ասլանյանին
/հասցեն՝ Արարատի մարզ, գ. Այգեգարդ, Չկալովի 23/1 տ./

«25» սեպտեմբերի 2020թ.
N 107/20145

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում

Հարգելի պարոն Ասլանյան,

Ի պատասխան Ձեր դիմումի՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանը ԱԸ2324/2020: Դրա հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծմանախահաշվային փաստաթղթերի առավելագույն 2 փաթեթ և մյուս կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համաձայնեցնելուց հետո, այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից հաստատելու և միացման նախահաշիվ ստանալու նպատակով, ներկայացնել ընկերության Շահագործման տնօրինություն՝ հետևյալ հասցեներից որևէ մեկով.

- 1. ք. Երևան, Բեռնակիրների 85/1
- 2. ք. Վայք, Շինարարների 15

Հաստատված նախագծմանախահաշվային փաստաթղթերի 1 բնօրինակ փաթեթը պահվելու է ընկերությունում:

Տեղեկացնում եմ նաև, որ նոր համակարգի կառուցման աշխատանքները սկսելուց առաջ հարկավոր է այդ մասին տեղեկացնել 1-85, 011 300185 հեռախոսակենտրոնի միջոցով:

Հողային աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:

Նոր համակարգի կառուցման տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով հարկավոր է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար լիցենզավորված կազմակերպության, որոնց ցանկը հրապարակված է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, օգտվել վերջինիս ծառայություններից և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը՝ ընկերության կողմից միացման աշխատանքներ կատարելու, առևտրային հաշվառոթի սարք տեղակայելու և Ձեզ հետ Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ կառուցված նոր համակարգի սեփականության իրավունքի Հայաստանի Հանրապետության անհատույց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն
Մ. Շահինյան

Պատասխանատու՝
Լ. Մարտիրոսյան

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ՎԵՈՒԼԻԱ ՋՈՐ» ՓԲԸ
ԵԼԻՑ 20145
25. 09. 20

OLIA

«Արտադրանքային Կառավարում ԵՄ»
Արտադրանքային Կառավարման Կենտրոնի պետ.
Ա. Արմենյան
2020թ.



Տեխնիկական պայման ԱՐ 2324 /2020

(Ջրամիացման և/կամ/ ջրահեռացման նախագծման)

մ. Գեղարքունիք հ.Ճովազարդ Լճափնյա փողոց 12/3
/Տարածքի հասցե/

Ռուբեն Մովսիսյան
/Բաժանորդի անուն, ազգանուն/

077900491
/Հետախուսմանը/





Միացման տեսակ	Ջրագիծ	Կոյուղագիծ
Նկարագիր	Լճափնյա փողոց 12/3 տարածքից մոտ 260մ հեռավորությամբ	
Գտնվելու վայր		
Տրամագիծ, ճնշում, տեսակ	d=50մմ, P=2.0մթն. ս/էք	
Միացման կետ	Լճափնյա փողոց 12/3 տարածքից մոտ 260մ հեռավորությամբ գտնվող	
Միացման տրամագիծ	Համաձայն նախագծի	
Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը		
Այլ պահանջներ	Ջրաչափական հանգույցի համար կառուցել դիտահոր	Կոյուղու համակարգը բացակայում է առաջարկվում է կառուցել հերմետիկ հոր
Ջրամատակարարման գրաֆիկ	Շուրջօրյա	



Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :


Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությունը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրապարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին : Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա :

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց թույլտվությունները և/ կամ համաձայնությունները :


«Գավառ» տեղամասի պետ  Մ. Գուդեյան
 Ինժեներական խմբի պատասխանատու  Ա. Կարապետյան


 Կատարող  Ա. Կարապետյան



Հավելված 7.

Տարածքի հատակագիծը



Հավելված 8.

**Համայնքի նախնական համաձայնությունը,
Աղբահեռացման պայմանագիր**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՅԱՅՆՔԻ ԾՈՎԱԶԱՐԴ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԵՎՎԱՐ**

Վ. Ծովագարի
Շտ. 094 571 471

25 հունվարի 2022թ.

Ելնելով հանրային բննարկման արդյունքներից Գեղարքունիքի մարզի Ծովագարի համայնքապետարանը տալիս է իր նախնական համաձայնությունը Ծովագարի համայնքի վարչական տարածքում Լճափնյա 12/3 հասցեում նախատեսվող գործունեության վերաբերյալ:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԶԱՐԴ

ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԵՎՎԱՐԻ

ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆԳՈՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԶԱՐԴ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՂԵԿԱՎԱՐ**

Գ. Ծովագարդ
Հեռ. 094-571-471

25 հունվարի 2022թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է քաղաքացի Ռ. Մովսիսյանին /լիազորված անձ Տ. Ասլանյանին/ այն մասին, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագարդ համայնքի վարչական տարածքում Լճափնյա 12/3 հասցեում հանգստի գոտու կազմակերպման ընթացքում առաջացող կենցաղային աղբը կարող է տեղափոխել Գավառի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԶԱՐԴ


ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐԱՄԱՅԻՍ ԵՆԳՈՅԱՆ

Հավելված 9.

Կանաչապատման ծրագիր



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

25.01.2022թ.

Ծովագարդ համայնք

2022թ. հունվարի 25-ին ժամը 12.00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ: ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով /առաջին փուլ/, քննություն Մովսիսյանի/լիազորված անձ՝ ՏՁ Ասլանյան/ կողմից ներկայացված ՍԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ՝ Գեղարքունիքի մարզի Ծովագարդ գյուղի վարչական տարածքում՝ լճափնյա 12/3 հասցեում, հանգստի գոտու կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը:

Ելույթ ունեցան՝

Բացման խոսքով հանդես եկավ Գավառ համայնքի Ծովագարդ գյուղի վարչական ղեկավար Ա. Ենգոյանը:

Ա. Ենգոյանը նշեց, որ հանրային քննարկումը վերաբերում է Գեղարքունիքի մարզի Ծովագարդ գյուղի վարչական տարածքում՝ լճափնյա 12/3 հասցեում, հանգստի գոտու կազմակերպման նախագծային փաստաթղթերին: Ներկայացրեց հանրային քննարկման մասնակիցներին և խոսքը փոխանցեց գործունեության նախագծող Գ.Շահինյանին:

Գ. Շահինյանը ներկայացրեց գործունեության իրականացման նպատակը, նշեց, որ տեղադրվելու են 6 հատ քոթեջներ, մաքրման կայան: Նշեց, որ գործունեությունն իրականացվելու է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի, Սևանա լճի՝ որպես հանգստյան գոտու կազմակերպման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումների պահանջներին համապատասխան:

Գործունեության իրականացման ընթացքում բնապահպանական խնդիրները ներկայացրեց «Նովալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Թամարա Նուրիջանյանը:

Թ. Նուրիջանյանը ներկայացրեց հանգստի գոտու կազմակերպան նախագծային փաստաթղթերի՝ նախատեսվող գործունեության նախնական գնահատման հայտի կազմման օրենսդրական հիմքը: Նշեց, որ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ Օրենքի 14-րդ հոդվածի պահանջների՝ նախատեսվող գործունեությունը, որն իրականացվելու է «Սևան» ԱՊ-ի ռեկրացիոն գոտում, ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Փորձաքննական գործընթացը լինելու է 1 փուլով, որի ընթացքում լինելու են 2 հանրային քննարկումներ: Ներկայացրեց հանրային քննարկումների նպատակը, ազդակիր համայնքի և շահագրգիռ հանրության տեղեկացված լինելու կարևորությունը նախատեսվող գործունեության իրականացման վերաբերյալ:

Թ. Նուրիջանյանը ներկայացրեց նաև գործունեության իրականացման հետևանքով հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա: Նշեց օդային, ջրային և հողային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանմանը և վերականգնմանն ուղղված միջոցառումների կարևորությունը, ինչպես նաև Սևանա լճի, որպես ռեկրացիոն գոտու սանիտարահիգիենիկ վիճակի պահպանման անհրաժեշտությունը: Կարևորեց, որ քոթեջները լինելու են ոչ բետոնային հիմքերով, հողային սշխատանքները լինելու են սահմանափակ՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անցկացման և կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրման արդյունքում: Նախնական գնահատման հայտով նախատեսվելու են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված միջոցառումներ:

Ճարտարապետ Գևորգ Շահինյանը պատասխանեց նաև «Սևան» ԱՊ-ի ներկայացուցիչ Կարեն Բաբայանի հարցերին՝ տեղադրվող քոթեջների հիմքերի լուծումների, տարածքի կանաչապատման և մաքրման կայանի տեղադիրքի վերաբերյալ:

Գ. Շահինյանը ներկայացրեց քոթեջների կառուցման սկզբունքի, մաքրման կայանի տեղադիրքի՝ 1905մ նիշից տեղադրվելու, ինչպես կանաչապատման նախագծի վերաբերյալ տեղեկատվությունը:

Համայնքի բնակիչների կողմից հարց բարձրացվեց, որպեսզի գործունեության իրականացման ընթացքում ներգրավվեն համայնքի բնակիչները:

Ա. Ենգոյանը եզրափակեց հանրային լսումը, նշելով որ հանրային քննարկման արդյունքում համայնքի բնակիչները հավանություն տվեցին նախատեսվող գործունեությանը:

Վարող –Գավառ համայնքի Մոնիթորի
Գյուղի վարչական ղեկավար
Ա. Ենգոյան



Ձեռնարկող/լիազոր ներկայացուցիչ/
Տ. Ասլանյան



Արձանագրող՝
Մ. Դավթյան



Մասնակիցների ցանկ

Քաղաքացի Ռ. Մոլիսյանի/իսպաղոված անձ՝ Տ. Ասլամյան/ կողմից ներկայացված ՍԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ՝
 Փեղարժուների մարզի Ծովագարո գյուղի վարչական տարածքում՝ լճակայա 12/3 հասցեում հանգստի գտող
 կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ համրային
 քննարկումներ /1-ին քննարկում/։ 25.01.2022թ.

Գ/Գ	Անուն, Ազգանուն	Տեղեկատվություն	Հեռախոսահամար	Ստորագրություն
1	Պետրոսյան Յուրյան	Ճեպարթ անձ	043-440005	
2	Պարտաբաժնի ղեկավար	Ճեպարթ հասցեով անձ	094-45-49-62	
3	ՉԱՆՈՒՄԻ ԽՈՍՏԱՅԻՆ ԱՆԸ	հասցե՝ Բաշին	077 90 79 96	
4	Ղևոնդիանյան Լիլյան	հասցե՝ Բ.Վ.Վ.Ս	093 877-669	
5	Կարոյան Ընթացի	հասցե՝ Բ.Վ.Վ.Ս	077-06-38-79	
6	Զաքարյան Սամվել		093 24 61 50	
7	Պարտաբաժնի ղեկավար	Բաշին Ծեպարթ ԿՎՊ	098 001 005	
8	Վաչագանյան Գրիգոր	Ճեպարթ հասցեով անձ	077 72 93 09	
9	Գալսեօ Գրիգորյան	հասցե՝ Ծեպարթ ԿՎՊ	093 68 74 76	
10	Վաչագանյան Գրիգոր	հասցե՝ Ծեպարթ ԿՎՊ	094 110301	
11	Վաչագանյան Գրիգոր	Ծեպարթ ԿՎՊ	094-571-471	
12	Պրոֆ. Գրիգորյան	Ծեպարթ	093-38-62-64	
13	Պրոֆ. Գրիգորյան	Ծեպարթ	09-14-60-52	
14	Պրոֆ. Գրիգորյան	Ծեպարթ	077-900-494	
15	Պրոֆ. Գրիգորյան	Ծեպարթ	093-59-02-78	
16				
17				

Հավելված 11
WGS-84 (ARMREF 02) կորդինատային տվյալներ

WGS-84 (ARMREF 02) կորդինատային տվյալներ				
1	N	X	Y	Z
3	1	8504409.892	4483206.817	0
4	2	8504459.814	4483221.192	0
5	3	8504468.786	4483223.776	0
6	4	8504484.825	4483196.086	0
7	5	8504482.35	4483195.253	0
8	6	8504420.463	4483174.438	0
9	7	8504419.839	4483178.127	0
10	8	8504414.902	4483194.581	0
11	9	8504508.883	4483154.833	0
12	10	8504506.687	4483166.901	0
13	11	8504499.564	4483180.128	0
14	12	8504493.016	4483175.667	0
15	13	8504420.999	4483153.468	0
16	14	8504407.439	4483130.151	0
17	15	8504411.01	4483106	0
18	16	8504430.545	4483112.773	0
19	17	8504438.906	4483115.672	0
20	18	8504437.551	4483120.397	0
21	19	8504447.787	4483127.318	0
22	20	8504466.45	4483127.444	0
23	21	8504490.048	4483130.259	0
24	22	8504498.771	4483137.257	0
25	23	8504508.438	4483152.172	0
26	24	8504423.332	4483157.481	0
27	25	8504419.563	4483178.206	1905.641
28	26	8504418.842	4483172.854	1905.514
29	26	8504427.066	4483175.287	1905.389
30	26	8504427.066	4483175.287	1905.389
31	27	8504427.086	4483175.175	1905.386
32	28	8504439.799	4483175.485	1904.593
33	29	8504451.72	4483179.438	1903.855
34	30	8504465.674	4483183.163	1902.575
35	31	8504473.624	4483185.474	1901.856
36	32	8504477.946	4483192.27	1901.032
37	33	8504478.911	4483186.041	1901.435
38	34	8504485.362	4483179.905	1901.462
39	35	8504492.409	4483178.452	1900.937
40	36	8504492.287	4483177.754	1901.225
41	37	8504476.962	4483174.678	1902.468
42	38	8504476.437	4483173.142	1902.339
43	39	8504467.79	4483174.845	1903.164
44	40	8504457.05	4483171.69	1904.015

45	41	8504451.955	4483165.823	1904.18			
46	42	8504433.403	4483166.417	1905.188			
47	43	8504423.092	4483157.145	1906.018			
48	44	8504414.48	4483166.685	1905.623			
49	45	8504413.867	4483155.503	1905.866			
50	46	8504399.709	4483150.318	1906.146			
51	47	8504411.666	4483097.452	1903.82			
52	48	8504408.902	4483096.675	1904.243			
53	49	8504413.658	4483089.465	1903.105			
54	50	8504417.163	4483085.603	1901.917			
55	51	8504411.035	4483106.149	1904.142			
56	52	8504406.827	4483109.966	1904.734			
57	53	8504416.037	4483111.734	1903.541			
58	54	8504420.73	4483111.921	1902.605			
59	55	8504425.892	4483113.317	1901.791			
60	56	8504429.095	4483120.421	1901.921			
61	57	8504429.6	4483118.939	1900.567			
62	58	8504437.331	4483128.098	1901.775			
63	59	8504437.724	4483125.441	1900.608			
64	60	8504439.21	4483138.272	1902.7			
65	61	8504451.848	4483139.637	1902.617			
66	62	8504457.234	4483136.244	1902.244			
67	63	8504461.196	4483129.495	1901.268			
68	64	8504460.945	4483128.028	1900.561			
69	65	8504467.794	4483138.945	1902.281			
70	66	8504483.063	4483131.225	1901.114			
71	67	8504483.036	4483131.228	1901.118			
72	68	8504484.019	4483130.171	1900.751			
73	69	8504493.011	4483142.158	1901.107			
74	70	8504496.28	4483140.935	1900.686			
75	71	8504498.006	4483151.581	1901.038			
76	72	8504501.341	4483153.545	1900.804			
77	73	8504494.903	4483156.895	1901.335			
78	74	8504495.378	4483167.88	1901.218			
79	75	8504498.069	4483170.113	1900.833			
80	76	8504492.253	4483177.254	1901.265			
81	77	8504495.115	4483178.141	1901.247			
82	78	8504481.248	4483173.829	1901.924			

83	79	8504471.049	4483165.272	1902.988			
84	80	8504463.159	4483168.394	1903.396			
85	81	8504452.105	4483160.028	1904.289			
86	82	8504433.3	4483153.353	1904.833			
87	83	8504386.669	4483154.479	1907.551			
88	84	8504390.495	4483158.534	1907.146			
89	85	8504391.288	4483135.777	1906.726			
90	86	8504383.598	4483160.004	1908.367			
91	87	8504387.392	4483163.717	1908.319			
92	88	8504383.815	4483177.503	1909.986			
93	89	8504377.302	4483175.367	1910.567			
94	90	8504374.238	4483173.739	1910.664			
95	91	8504380.873	4483143.653	1910.195			
96	92	8504383.847	4483143.317	1909.998			
97	93	8504387.24	4483126.34	1909.804			
98	94	8504384.634	4483125.69	1909.997			
99	95	8504374.401	4483173.623	1910.682			
100	96	8504372.724	4483180.444	1910.798			
101	97	8504374.36	4483181.81	1910.765			
102	98	8504371.199	4483199.221	1911.022			
103	99	8504368.732	4483198.568	1911.036			
104	100	8504375.493	4483185.482	1909.798			
105	101	8504382.518	4483185.862	1909.39			
106	102	8504375.855	4483197.444	1908.371			
107	103	8504375.62	4483199.658	1908.265			
108	104	8504376.732	4483199.557	1908.159			
109	105	8504381.848	4483199.376	1907.894			
110	106	8504380.511	4483195.992	1908.073			
111	107	8504386.149	4483187.551	1907.348			
112	108	8504388.254	4483181.319	1907.173			
113	109	8504389.68	4483179.443	1907.133			
114	110	8504390.278	4483170.053	1907.277			

Առաջարկությունների և դիտողությունների ամփոփաթեթ

Ամփոփաթեթ



«Սևան» ԱՊ տարածքում, Ծովագարդ գյուղի լճափնյա 12/3 հասցեում, մեկ հարկանի վեց շարժական քոթեջների էքզիզային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ դիտողությունների պատասխանները				
ԳԳ	Ներկայացված դիտողությունները	Դիտողության պատասխանը	Հիմնավորում	Կարծիք
1.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի (այսուհետև Հայտ) 12.8 կետում նշվում է, որ կանաչապատվելու է 0,07 հա տարածք սիզամարգի տեսքով, ինչը չի համապատասխանում Հավելված 9-ով տրամադրած տեղեկությանը, ինչով նախատեսված է սիզամարգ և թփաձև կանաչապատում համապատասխանաբար 1136 մ ² և 1211 մ ² մակերեսներով: Առաջարկում եմ շտկել տարբերությունները և տարածքի կանաչապատման ժամանակ նախապատվություն տալ ծառաթփային տեսակներով կանաչապատմանը, ինչպես նաև 12.8 կետում Հավելված 10-ը փոխարինել Հավելված 9-ով:	Ընդունվել է, 12.8 կետում կատարվել են համապատասխան փոփոխություններ: /Էջ 40/	Նկատի ունենալով, որ տարածքը գտնվում է 1905 նիշից ցածր տարածքում, ծառաթփային կանաչապատում չի նախատեսվում:	
2.	Հայտում մանրամասն ներկայացնել 4800.05 մ ² հողատարածքի մակերեսով նախատեսվող հանգստի գոտու տեխնիկա-տնտեսական ցուցանիշները	Կատարվել է լրացում 12.1 կետում:	Տարածքի 80% Կանաչապատման մակերեսը հնարավոր չէ	

<ul style="list-style-type: none"> Մեկ հարկանի վեց շարժական քոթեջների և օժանդակ շինությունների ընդհանուր կառուցապատման մակերեսը /մ²/ և կառուցապատման տոկոսը /%/, Հանգստի գոտու ընդհանուր կանաչապատման մակերեսը /մ²/ և կանաչապատման տոկոսը /%/, Անջրանցիկ տարածքների (ասֆալտապատ ճանապարհ, սալվածք, մայրեր, անցուղիներ, և այլն) մակերեսը /մ²/ և անջրանցիկ տարածքների տոկոսը /%/, <p>Հաշվի առնելով Ծովագարդի համայնքապետարանի կողմից 05.08.2021թ-ին տրված N03/21 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք), համաձայն որի</p> <p>9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով)-20 /%/,</p> <p>9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատման տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով)-80 /%/,</p>	<p>պահպանել, քանի որ ընդհանուր տարածքի ընդամենը մոտ 10%-ն է կառուցապատվում ժամանակավոր քոթեջներով, մնացածը կամ կանաչապատվում է, կամ լողափ է, կամ ջրածածկ է:</p>			
3.	Էջ 33-ում ներկայացված է, որ «...Քոթեջները տեղադրվելու են առանց հողային աշխատանքների իրականացման, ցցերով ամրացվելու է գրունտի մեջ:» Էջ 11-ում նշված է «...նախատեսվող գործունեության տարածքի հիմնական մասը՝ մոտ 95% գտնվում	Ինչպես նշված է հայտում շինությունները իրականացվելու են բացառապես		

<p>է 1905 նիշից ցածր, մնացած մասը՝ 1905 նիշից բարձր է», ինչը նշանակում է, որ կառուցապատման գերակշռող մասը իրականացվելու է 1905 նիշից ցածր առավելագույնը ոչ հիմնական շինություններով, իսկ էջ 41-ի շինարարության կազմակերպման նախագծում երևում է բետոնային թաց շինարարական պրոցեսներ հիմքերի իրականացման համար, ինչը նշանակում է քոթեջները համարվում են հիմնական կապիտալ շինություններ:</p> <p>Համաձայն ՀՀ կառավարության 2008թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման 5-րդ կետի 1-ին ենթակետի «...Առաջին ենթագոտում արգելվում է հիմնական օբյեկտների կառուցումը (բացառությամբ սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերի /3/ ավապաշտպան, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և /կամ հիդրոտեխնիկական բնույթի հիմնական օբյեկտների կառուցման անհրաժեշտության դեպքում.../): Հանգստի և սպասարկվող օբյեկտների ֆունկցիոնալ կահավորումն ու բարեկարգումն իրականացնել միայն ոչ հիմնական շինություններով՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան. »:</p>	<p>ժամանակավոր կառույցներով և բետոնի օգտագործումը բացառվում է: 36-րդ էջում կրկին նշվել է, որ քոթեջները իրականացվելու են ժամանակավոր կառույցներով:</p>		
<p>4. Մնհրաժեշտ է ներկայացնել ՀՀ կառավարության 18.12.2008թ. N563-Ն որոշման 3-րդ կետով սահմանված</p>	<p>Պահանջը դուրս է ձեռնարկողի իրավասությունից, դա</p>	<p>Համաձայն ՀՀ օրենսդրության Սևան ազգային</p>	<p>ՀՀ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության</p>

ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

	<p>միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը</p>	<p>շրջակա միջավայրի նախարարության Սևան ազգային պարկի իրավասությունն է:</p>	<p>պարկի կողմից հողահատկացում կատարվում է միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա, առանց որի հողահատկացում և վարձակալության պայմանագիր չէր կնքվի:</p>	<p>մասին» ՀՀ օրենքի նախնական գնահատման հայտի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներում նման պահանջ չկա:</p>
<p>5.</p>	<p>Հայտի էջ 13-ի 11.2 կետում համայնքի անվանումը ուղղել / Օովագարդ համայնքի փոխարեն նշված է Օովագույղ համայնք/</p>	<p>Ընդունվել է, ուղղվել է/էջ 19/:</p>		
<p>6.</p>	<p>Նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրքի վերաբերյալ ներկայացնել WGS-84 (ARMREF 02) կորդինատային տվյալների քարտեզ-սխեմա</p>	<p>Կցվել է համապատասխան տեղանքի իրադրության հատակագիծը հաստատված Կարաստրի կոմիտեի կողմից /էջ 12/ և WGS-84 (ARMREF 02) կորդինատային տվյալները /հավելված 11/ :</p>		
<p>7.</p>	<p>Ներկայացնել վեց քոթեջների տեղադրման բացարձակ նիշերը</p>	<p>Կատարվել է լրացում /էջ 35/:</p>		
<p>8.</p>	<p>Հայտում ներկայացնել գործունեության ենթակա և հարակից տարածքի ներկա վիճակի նկարագրությունը /շենք,</p>	<p>Կատարվել է մասնակի լրացում/էջ 11-12/</p>	<p>Հայտում առկա է հեռավորությունները, իսկ համայնքներից</p>	

	շինությունների առկայությունը, հեռավորությունը մոտակա համայնքից, այլ շինություններից, ենթակառուցվածքներից և այլն/		հեռավորությունը ներկայացված է իրադրության սխեմայում:	
9.	Հայտում ներկայացնել տեղեկատվություն գործունեության ենթակա, հարակից և ջրածածկ տարածքներում արդյոք առկա են հաստվող ծառեր, կոճղակներ կամ դեղափոխվող ծառեր և ծառափայլին բուսականություն, ինչպես նաև առկայության դեպքում տրամադրել տեղեկատվություն հասման, տեղափոխման և մաքրման միջոցառումների վերաբերյալ	Հայտի /էջ 11-12/ կատարվել է մասնակի լրացում:	Հայտում առկա է տեղեկատվություն, որ տարածքում բացակայում է ծառափայլին բուսականությունը, ծառերը:	
10.	Հայտի էջ 36-ում նշված մանկական ջրավազանների տեղադիրքը ներկայացնել հասակագծում և նկարագրել	Պարզաբանվել է /էջ 40/: Նախատեսվող գործունեությունը մանկական ջրավազան չի նախատեսում:	Նշված մանկական ջրավազանները նշված է, որպես 1563-Ն որոշման 2 հավելվածի պահանջ, ոչ թե նախատեսվող գործունեության տեխնիկական լուծում, խոսքը վերաբերում է արհեստական հավաքովի ջրավազաններին, ինչը կարող է չդրվել, ուղղակի նշվել է ձեռնարկողին որոշման	

			պահանջները ցուցանելու համար:	
11.	Հայտի էջ 26-ի աղյուսակ 6-ի վերնագրում «բուսատեսակները» բառը փոխարինել «կենդանատեսակները» բառով	Ընդունվել է, փոխվել է /էջ 31, աղյուսակ 7/:		
12.	Իրավական հիմքերը բաժինը լրացնել շրջակա միջավայրի նախարարի 2003թ. դեկտեմբերի 10-ի «Ջրային ռեսուրսներ թափվող կեղտաջրերի թույլատրելի սահմանային արտահոսքի չափաբանակների հաշվարկի մեթոդիկական հաստատելու համար» N 464-Ն և 2020թ. սեպտեմբերի 9-ի «Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» N 335-Ն հրամաններով, իսկ ռեկրեացիոն գործունեությունն իրականացնել 2020 թվականի սեպտեմբերի 9-ի «Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջները սահմանելու մասին» N 335-Ն հրամանի պահանջներին համապատասխան	Ընդունվել է բաժինը լրացվել է /էջ 7,8,9/		
13.	32-րդ էջում նշվում է, որ շահագործման փուլում հանգստացողների առավելագույն քանակը կազմելու է 22 մարդ, սպասարկող անձնակազմը լինելու է 3 մարդ, իսկ «ՅՈՒՆԵՍՏՈ 30»-Լոգո տեսակի կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանը կարող է սպասարկել 30 մարդու (էջ 42), մինչդեռ 44-րդ էջում նշվում է, որ ընկերությունը կարող է տեղադրել նաև կեղտաջրերի նույնատիպ	Ձևակերպումը վերաբերում է նույնատիպ հզորության, և մաքրման աստիճան ունեցող այլ մաքրման կայանի, ինչը ընդունելի տարբերակ է:		Ձեռնարկողը, ելնելով իր ֆինանսական հնարավորություններից և շուկայական հարաբերություններից կարող է գնել հայտում ամրագրված նույն չափանիշներով այլնտրանքային մաքրման

	մաքրման աստիճան սպահովող այլ տեսակի մաքրման կայան, ինչը պարզաբանման կարիք ունի			կայան, ինչի վերաբերյալ օրենսդրական սահմանափակումներ չկան:
14.	Պարզաբանման կարիք ունի, թե որ գոտում են տեղադրվելու զուգարանները, քանի որ 36-րդ էջի «12.7 Լողափի կահավորում» բաժնում նշվում է, որ տարածքի կահավորումը նախատեսվում է կատարել, ելնելով ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման N 2 հավելվածում նշված հետևյալ պահանջից՝ զուգարանները պետք է տեղադրվեն գոտուց առնվազն 50 մետր հեռավորության վրա, մինչդեռ N1563-Ն որոշման այդ դրույթը վերաբերում է բուֆերային գոտու տարածքին, համաձայն որի զուգարանները պետք է տեղադրվեն լողափի գոտուց առնվազն 50 մետր հեռավորության վրա	Կատարվել է պարզաբանում /էջ 36/: Նշվածը վերաբերվում է 1563-Ն որոշման 2 հավելվածի պահանջին, ոչ թե նախատեսվող գործունեության տեխնիկական լուծմանը:	Նկատի ունենալով տնակների փոքրաթիվ քանակը և տարածքի տեղադիրքը դրսում զուգարանների տեղադրում չի նախատեսվում /նշված է հայտի 49 էջի 13,4 կետում/:	
15.	Էջ 36-ի «Ձրահեռացում» բաժնում նշել կենցաղային կեղտաջրերի հեռացման համար նախատեսվող «ՅՈՒԲԱՍ 30»-Լոգո մաքրման կայանի տեղադրման նիշը և հեռավորությունները Սևանա լճից	Կատարվել է լրացում: Մաքրման կայանը տեղադրվելու է 1905,5 նիշում, հեռավորությունը սևանա լճից 32,6 մ հեռավորության վրա: /էջ 36/	Հայտի 12.1 կետում և գծագրական նյութում նշված էր, որ մաքրման կայանը տեղադրվելու էր 1905-նիշից բարձր, ինչը և օրենսդրության պահանջ է:	
16.	Էջ 44-ում նշվում է, որ շահագործման փուլում հանգստյան գոտու տարածքում զուգարանների տեղադրում չի նախատեսվում, վերջիններս լինելու են	Տես 14 կետի պատասխանը:		

	միայն քոթեջներում, ինչը ևս թույլ չի տրամադրում է առաջացնում և հստակեցման կարիք ունի			
17.	Էջ 42-ում ներկայացված է, որ «...Անիվների վացումից առաջացած հոսանքաջրերը 150մ երկարության պլաստմասե խողովակներով ինքնահոս հեռացվելու են դեպի բիոզուգարան»: Անհրաժեշտ է ներկայացնել տեղեկատվություն բիոզուգարանի տարայում հավաքվող ջրի ծավալը, անջրայտափանց տարայի նյութի տեսակը, կեղտաջրերի հավաքման և հեռացման միջոցառումների, ինչպես նաև պարբերականության վերաբերյալ	Կատարվել է մասնակի լրացում /էջ 46/:	Կեղտաջրերը հեռացվելու են պարբերաբար, ելնելով լցվածության աստիճանից, մասնագիտացված կազմակերպությունների կողմից պայմանագրային հիմունքներով:	Կեղտաջրերի հեռացման միջոցառումները առկա են հայտում՝ 14.3 կետում:
18.	Էջ 45-ում ներկայացված «Կենցաղային աղբի հաշվարկները»-ում անհրաժեշտ է վերանայել հաշվարկը, քանի որ բանաձևում շինարարության փուլում տեղադրվել է հանգստացողների ընդհանուր ծանրաբեռնվածությունը /25 մարդ/, իսկ շահագործման փուլում՝ աշխատողների թիվը /6 մարդ/, և համապատասխանաբար խմբագրել կենցաղային աղբի ծավալների քանակը «13.7 Թափոններ.» բաժնում / «...կենցաղային թափոններ աղբ /ծածկագիր 91200400 01 00 4/ կառուցապատման փուլում՝ 16,7 կգ/օր, շահագործման փուլում՝ 2 կգ/օր»/	Վերանայվել է, կատարվել է ուղղում /էջ 49/:		
19.	Վերանայել և հստակեցնել նախագծին կից ներկայացված Նախագծման թույլտվության 12.1-րդ կետով կատարված հղումը, քանի որ այդ կետով հղում է կատարվել ՀՀ կառավարության 01.12.2005 N 2128-Ն որոշմանը, որով փոփոխություն է կատարվել	Պարզաբանում՝ Նախագծման թույլտվությունում կատարված հղումը տրվել է Ծովագարդ համայնքապետարան	Հետագա շինաշխատանքների և թույլտվությունների ստացման	Կառուցապատման նախագծման թույլտվություններում կարող են լինել անճշտություններ, որոնք անհրաժեշտության

	N 766-Ն որոշման N 2 հավելվածի 4.3-րդ կետում, մինչդեռ N 766-Ն որոշման N2 հավելվածը ներկայումս ուժը կորցրած է ճանաչվել (ՀՀ կառավարության 31.07.08 N 812-Ն որոշում)	ի կողմից, որը չի ներառվել հայտում և այն չի կարող շրջակա միջավայրի բաղադրիչների վրա ազդեցության ունենալ:	ընթացքում կվերանայվի:	դեպքում կարող են ճշտվել համալիր փորձաքննության ընթացքում և կապ չունեն բնապահպանական փորձաքննական գործընթացի հետ:
20.	Անհրաժեշտ է հստակեցնել նախատեսվող գործունեության տարածքի տեղադիրքի կորդինատները, քանի որ համաձայն ՀՀ կառավարության 2002թ. մայիսի 30-ի N927-Ն որոշման «ՄԵՎԱՆ» ազգային պարկի ռեկրեացիոն գոտու 1905,0 մետր բացարձակ նիշից բարձր տարածքներում հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծերին և կառուցապատման էսքիզներին համապատասխան, ինչն էլ ենթադրում է, որ 1903,0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքները վարձակալության ենթակա չեն	Պարզաբանվել է:/էջ 15/	177 որոշմամբ հաստատված «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտիավորման նախագծի» 6,11 մասի 3-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության` պարկի ռեկրեացիոն գոտու տարածքներում թույլատրվում են զբոսաշրջիկների և այցելուների սպասարկման ծառայությունների կազմակերպումը, ինչի նպատակով	Միաժամանակ Շրջակա միջավայրի նախարարության կողմից դրական եզրակացություններ են տրամադրվել նախատեսվող գործունեության անմիջապես հարակից, և բազմաթիվ նույն նիշում և նիշից ցածր գտնվող հանգստի գոտիների, առանց նման ենթադրություն անելու:

			կատարվել է ռեկրեացիոն տարածքի հստակ գոտևորում: Համաձայն նույն որոշման 5-րդ մասի 5-1 աղյուսակի ռեկրեացիոն գոտու տարածքը տեղակայված է 1903,5 նիշում:	
21.	«13.7 Թափոններ» բաժնում անհրաժեշտ է հստակեցնել շինարարական աղբի տեղափոխման վայրը	Կատարվել է պարզաբանում /էջ 49, 54/:	Շինաղբի տեղափոխման վայր չի նախատեսվում, քանի որ Կասպալառու կազմակերպությունն իր հետ տանելու է շինաղբի մնացորդները:	
22.	4-րդ գլխում ավելացնել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը /1994թ. հոկտեմբերի 11, ՀՕ-121/ և օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերը	Ընդունվել է, ավելացվել է /էջ 7.9/:		
23.	Հայտի 12.5 կետում նշվում է, որ շինարարության փուլում աշխատողների խմելու ջուրը կատարվելու է բերովի ջրով մինչև ջրամատակարարման համակարգի կառուցումը, իսկ հանգստի գոտու կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի	Պարզաբանում Բերովի ջուրը բերում են այն մեքենաները, որոնք ունեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված համապատասխան	ՀՀ Ջրային Օրենսգիրք, հողված 39 կազմակերպություն ը, որը ստանում է ջրամատակարարման և լիցենզիա, կարող	Հարցադրումը հայտի փորձաքննական գործընթացի հետ կապ չունի և այս փուլում գործունեության նախատեսող ձեռնարկողի խնդիր չէ:

	ավտոցիստեռով՝ պայմանագրային հիմունքներով: Անհրաժեշտ է հստակեցնել ավտոցիստեռներով բերվող ջրի հիմունքները և համայնքը	թույլտվություններ: Հայտի 12,9 և 13.3 կետերում ամրագրված է:	է ջրամատակարարման և ջրահեռացման աշխատանքներ կատարել պայմանագրային հիմունքներով:	
24.	Հայտի 12.9 կետում նշված տեխնիկական նպատակով բերվող ջրի վերաբերյալ նույնպես անհրաժեշտ է ներկայացնել տեղեկատվություն, թե որ համայնքից և ինչ հիմունքներով է բերվելու	Տես 23-կետի պատասխանը:	Այօրինի ջրօգտագործումը կանխելու նպատակով մոնիթորինգի բաժնում նախատեսվել է ջրային ռեսուրսների մոնիթորինգ՝ «Սևան» ՎՊ-ի վերահսկողությամբ:	Ջուրը բերվելու է ըստ կարիքի և հաճախականությունն էլ կախված է լինելու սպառումից: Անհրաժեշտ թույլտվությունները ստանալուց հետո՝ մասնագիտացված կազմակերպությունների հետ կնքվելու է պայմանագիր: Այօրինի ջրօգտագործումը կանխելու համար կան տեսչական հսկողության մարմիններ, նաև Սևան ազգային պարկ, որոնք պետք է կանխեն ստուգայցերի միջոցով:
25.	Ներկայացնել քոթեջների կոյուղագծի միացման եղանակները և լուծումները դեպի մաքրման կայան/ կոյուղագծի անցկացում, հողային աշխատանքների ծավալն այլ/	Կատարվել է մասնակի լրացում՝ կոյուղագծի միացման եղանակի մասին, իսկ մնացածի վերաբերյալ	Հայտի ««Ջրահեռացում»» էջ 40, նշված է. Քոթեջների կոյուղու համակարգը	

		տեղեկատվությունը հայտում առկա է: /էջ 39/	կատարվելու է de 110 թողարկ խողովակների միջոցով, միանալով կոյուղու բակային ցանցին: Բակային հատվածում կոյուղու թողարկները միացվելու են ՆՆՀ(1-7) դիտահորերին, որոնք հավաքող կոլեկտորի և պոմպի միջոցով մղվելու են դեպի մաքրման կայան: Նաև՝ ««Հողային ռեսուրսներ»» բաժնում էջ 46,47 նշված է. Հողային զանգվածն առաջանալու է ժամանակավոր կառույցների համար կետային(ցիցային) փորվածքներից և ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների անցկացման աշխատանքներից 370մ³ ծավալով:	
--	--	--	--	--

26.	<p>Հայտի 10-րդ կետում նշվում է, որ կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է «Սևան ազգային պարկ»-նեկրեացիոն գոտում: Համաձայն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի կենտրոնական գոտու տարածքը համապատասխան ուղղությամբ պահպանվող սահմանափակ տնտեսական և քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ է: Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներում գործունեության կարգը սահմանվում է օրենքով</p>	<p>Պարզաբանում՝ Պարկի նեկրեացիոն գոտու տարածքում թույլատրվում են «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով սահմանված օգտագործման ձևերը: Համաձայն ՀՀ կառավարության 2011թ. -ի մարտի 3-ի 177 որոշմամբ հաստատված «Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտիավորման նախագծի» 5-1 աղյուսակի հիմնականում նեկրեացիոն գոտու տարածքը տեղակայված է 1903,5 նիշում:</p>	<p>«Սևան ազգային պարկ»-նեկրեացիոն գոտում: Համաձայն «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի կենտրոնական գոտու տարածքը համապատասխան ուղղությամբ պահպանվող սահմանափակ տնտեսական և քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ է, ուստի գործունեության կարգը սահմանված է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:</p>	<p>ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված առաջին ենթագոտին ներառում է լողափի և բուֆերային գոտու տարածքները: Առաջին ենթագոտում՝ 1) արգելվում է հիմնական օբյեկտների կառուցումը Հանգստի և սպասարկող օբյեկտների ֆունկցիոնալ կահավորումն ու բարեկարգումն իրականացնել միայն ոչ հիմնական շինություններով, ինչը և արվել է:</p>
-----	---	--	---	--

27.	<p>Նախատեսվող աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ներկայացված ծրագրի բացառելով բացասական ազդեցությունները ջրային ռեսուրսները և մասնավորապես Սևանա լճի վրա</p>	Իրականացվելու է	Հայտում նախատեսված են համապատասխան միջոցառումներ, որոնց կատարումը պարտադիր է:	
28.	<p>«Կլիմա և օդային աղբյուր» ենթաբաժնում ներկայացված կլիմայի վերաբերյալ տվյալները թերի են: Ճշգրիտ կլիմայական նկարագիր կազմելու համար անհրաժեշտ է ներառել նաև «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ 11-7.01-2011» (http://www.mud.am/lows/files/26_10_11_h.pdf) նորմատիվային փաստաթղթում առկա «Սևան քաղաք» օդերևութաբանական կայանի քամու ամսական և տարեկան տվյալները աղյուսակային տեսքով</p>	Ներառվել է /եջ 21/:	Կլիմայական բնութագրի համար հիմք է ընդունվել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և համապատասխան կլիմայական ցուցանիշները:	
29.	<p>Բացակայում են օդի որակի ելակետային տվյալները, իսկ ներկայացված օդի ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ տեղեկատվությունը ժամանակավորեպ է</p>	Կատարվել է փոփոխություն օդի որակի ցուցանիշները հանվել է:	Ոլորտը կարգավորող նոր իրավական ակտ չկա, դրա ընդունումը լիազոր մարմնի իրավասությունն է: Շրջակա միջավայրի նախարարության կողմից նոր իրավական ակտի ընդունման դեպքում	

			կառաջնորդվենք նոր իրավական ակտով:	
30.	«Հողային ռեսուրսներ» ենթաբաժնում բացակայում է հողերի ադոտովածության վերաբերյալ տեղեկատվությունը	Կատարվել է լրացում / 22-23 էջեր/ :		
31.	Հայտում առկա են հատակագծեր և դրանց հետ կապված վերլուծություններ, որոնք չեն առնչվում Լճափնյա 12/3 հասցեի հողամասի հետ: Շինությունների գծագրերում պարզաբանված չեն դրանց ժամանակավոր լուծումները: Առաջարկում ենք վերանայել Մևան-Գավառ ավտոմայրուղուց դեպի տարածք մտնող ճանապարհի լուծումը	Կատարվել է պարզաբանում/էջ 11/ ճանապարհի նիշը մոտ 3մ բարձր է հողամասի նիշից, որի պատճառով հնարավոր չէ իրականացնել 12/3 հողամասի հատվածից մուտքն ու ելքը: Հողամասի տարածք մուտքն ու ելքը նախատեսված է իրականացնել իր սեփականությունը հանդիսացող հարևան հողատարածքից:	Հայտի էջ 11 նշված է. Համաձայն ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 177-Ն որոշմամբ հաստատված ՄԵՎԱՆ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ՝ տարածքը տեղակայված է «Ծովագարդ» տարածքային հատվածում, որն ունի ոչ հարթ ռելիեֆ և կտրտված ափի գիծ: Զուրը տեղ-տեղ (400մ մեկ հատվածում և 400մ	Ճանապարհի փոփոխության դիտարկումը ժամանակավոր լուծում է, միջև համապատասխան գերատեսչության կողմից 177-Ն որոշման պահանջների կատարումը:

			այլ հատվածում) հասնում է Մ-10 ճանապարհին (1905.0մ): Համաձայն նույն որոշման՝ այս հատվածում ևս նախատեսվում է տեղափոխել ճանապարհը՝ անցկացնելով այն ավելի բարձրադիր տեղամասերով: Մ-10 ճանապարհին իր հին ծրագծով (ոչ ջրածածկվող հատվածներով) կօգտագործվի որպես ռեկրեացիոն գոտին սպասարկող ճանապարհ:	
32.	«12.2 Տարածքի կառուցապատում» բաժնում նշել բոլոր քոթեջների կառուցման նիշերը և յուրաքանչյուրը քանի անձի համար է նախատեսված	Ճշտվել է: Քոթեջներում հանգստացողների քանակը առավելագույն բեռնվածության դեպքում՝ վերցվել է յուրաքանչյուր քոթեջում 4 անձ, ինչպես և պահանջվում է: /էջ 5	Հաշվարկները կատարվել է հնարավոր առավելագույնով/ան կախ ննջասենյակների քանակից/՝ 5 քոթեջի համար՝ 20 մարդ և 1 քոթեջում՝ 3 մարդ/սպասարկող անձնակազմ/ :	

33.	Էջ 73-ի «ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌՔՈՒՎԱԿԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»-ի, 1.4 կետում ներկայացված է՝ «...Համաձայն 07/03/2007թ.-ին կնքված և ՀՀ Սևան նոտարական տարածքի նոտարի կողմից 11/10/2007թ.-ին գրանցամատյանի թիվ 2095 համարով վավերացված «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» պայմանագիր...»-ը: Անհրաժեշտ է ներկայացնել 07/03/2007թ.-ին կնքված վերոնշյալ պայմանագիրն ամբողջությամբ	Պարզաբանում. Անհրաժեշտ էր հարցում կատարել է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին: Պահանջը դուրս է Ձեռնարկողի իրավասություննից:	<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի նախնական գնահատման հայտի 16-րդ հոդվածի 4-րդ մասում՝ պահանջներում նման պահանջ չկա:	
34.	Էջ 73-ի «ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌՔՈՒՎԱԿԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»-ի, 1.6 կետում ներկայացված է՝ «...Կառուցապատման իրավունքի օտարման համար առկա է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համաձայնությունը՝ տրված 08/06/2020թ.-ին թիվ 25-839 գրությամբ»: Անհրաժեշտ է ներկայացնել համաձայնության թիվ 25-839 գրությունը	Պարզաբանում. Անհրաժեշտ էր հարցում կատարել է «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ին:		<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի նախնական գնահատման հայտի 16-րդ հոդվածի 4-րդ մասում նման պահանջ չկա:
35.	Էջ 77-80-ում՝ «Հավելված 4. Ճարտարապետական կազմային առաջադրանք»-ում, 12.2(*) էլեկտրամատակարարում կետում ներկայացված է, որ տեխնիկական պայմանը Կցվում է «...ըստ 2014թ. ՀԷՑ կողմից տրված տեխ. պայմանի»: Անհրաժեշտ է հավելվածում կցել «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանը	Կատարվել է լրացում /էջ 38/:		Ընկերությունը դիմել է ՀԷՑ-ին պայմանագիր կնքելու համար:
36.	«12.2 Տարածքի կառուցապատում» բաժնում նշել ավագակոպչային ծածկույթի վրա 10 ավտոմեքենայի համար նախատեսվող ավտոկայանատեղիի նիշերը	Կատարվել է լրացում /էջ 35/:		

37.	Ներկայացնել տեղեկատվություն նախատեսվող կանաչապատման աշխատանքների ընթացքում տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառափայլի բուսականության տեսակայանի և քանակային կազմի վերաբերյալ	Վերանայվել է կանաչապատման մակերեսը: Կանաչապատումը լինելու է սիզամարզի և տեղ տեղ ծաղիկների տեսքով: 12.8 և 13.10 կետերը	Նկատի ունենալով, տարածքի տեղակայման նիշը ծառափայլի բուսականություն չի նախատեսվել:	Կանաչապատման նախագիծը ներկայացվել է «Սևան» ԱՊ-ի հաստատմանը:
38.	Հայտի «Հավելված 7» և « Հավելված 9»-ի պայմանական նշաններում ներկայացված ցուցանիշների թվերի միջև առկա են անհամապատասխանություններ	Ճշտվել է:		
39.	Կադաստրի կոմիտե. Հայտնում ենք, որ 05-050-0654-0015 կադաստրային ծածկագրով հողամասը արտացոլված է կադաստրային քարտեզում, սակայն առկա են անհամապատասխանություններ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06082020-05-0001 վկայականում նշված հողամասի մակերեսի (0.48 հա), երկրաչափական պատկերի և կադաստրային քարտեզի տվյալների (ըստ քարտեզի՝ մակերեսի չափը 0.3855 հա է) միջև: Հողամասը կադաստրային քարտեզում ճշգրիտ տեղադրելու համար առաջարկում ենք հետազայում ներկայացնել հողամասի հատակագիծը՝ WGS-84 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով՝ ՀՀ կառավարության	Կցվել է համապատասխան տեղանքի իրադրության հատակագիծը հաստատված Կադաստրի կոմիտեի կողմից /էջ 12/ և WGS-84 (ARMREF 02) կոորդինատային տվյալները /հավելված 11/ :		

	2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման պահանջներին համապատասխան:			
40.	ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողով. - Շահագործման փուլում նախատեսվող «ՅՈՒԲԱՍ 30» ԼՈԳՈ տեսակի մաքրման կայանի տեղադրման փոխարեն դիտարկել կոյուղու և կենցաղային ջրերը տարածաշրջանի մաքրման կայանին միացնելու տարբերակը:	Պարզանաբում. Մաքրման կայանի պահանջն ամրագրված է ՀՀ կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի «ՄԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ, ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ N1563-Ն որոշման 11-րդ կետի 9) ենթակետի պահանջին համապատասխան:	Նախատեսվող գործունեության վարչական տարածքում՝ Օռվազարդ համայնքում, բացակայում է կոյուղու համակարգը: Օռվազարդ համայնքի տարածական զարգացման ծրագրով նախատեսվում է ներդրումներ կատարել այս բնագավառում: Հայտի 11.2 կետում առկա է տեղեկատվությունը:	Տարածաշրջանի մաքրման կայանին միացնելու տարբերակը կքննարկվի, երբ կկառուցվի կեղտաջրերի հեռացման միասնական կոլեկտոր:

41	«Լանդշաֆտ և տարածքի բարեկարգում» բաժնում թվարկել հստակ տարածքի համար բնորոշ ծառատեսակները, այդ թվում՝ գիհի, սոճի, կովկասյան եղևնի կամ սիզամարգ:	Պարզաբանում. Այստի ունենալով, որ տարածքը հիմնական մասը 1905 նիշից ցածր տարածքում է, ուստի ծառատեսակներ չեն նախատեսվել, նախատեսվել են սիզամարգ և տեղանքին բնորոշ թփային բուսականություն՝ վարդերի և այլ ծաղիկների տեսքով:		
42	3.Էջ 17-ում, "11.6 -Ջրային ռեսուրսներ" բաժինը քննարկում է ամբողջ ավազանի հիդրոլոգիական և հիդրոերկրաբանական պատկերը, մինչդեռ պետք է առավել մանրամասն ներկայացնել նախատեսվող գործունեության տարածքի համար:	Պարզաբանում. Նախատեսվող գործունեության տարածքը Սևանա լճի ափամերձ տարածքն է, ինչը մանրամասն բնութագրվել է, այլ ջրային օբյեկտներ չկան:		
43	Դիտարկվող նախագծում Սևանա լճի ավազանում տեղումների տվյալները չեն համապատասխանում իրականությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Սևանա լճի ավազանի բոլոր օդերևութաբանական կայանների տեղումների արժեքները	Ավելացվել է /էջ 19/:	Աղյուսակ 3-ում տեղումների բնութագիրը վերցված է ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»	

			նորմատիվային փաստաթղթից:	
44	EU4Sevan ծրագրի ՄԱԶԾ-ի բաղադրիչի (ուղղված է օրենսդրական և ինստիտուցիոնալ փոփոխություններին) շրջանակներում ներկայումս հայտարարվել է "Մևան" ազգային պարկի կառավարման պլանի նախագծի մշակման մրցույթ: Հետևաբար, մոտ ժամանակները հնարավոր են փոփոխություններ պարկի կանոնադրությանում և գործառնական գոտիների սահմանումներում:	Փոփոխությունների ընդունման դեպքում դրանք հաշվի կառնվեն:		
45	ՀՀ Կրթության, Գիտության, մշակույթի և Մպորտի նախարարություն . Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջների՝ նախնական հայտում ներառված չեն քոթեջների կառուցման համար նախատեսված տարածքում կատարված հնագիտական ուսումնասիրությունների եզրակացությունները:	Պարզաբանում. Եզրակացության անհրաժեշտությունը չկա, քանի որ 2011 թ.ի մարտի 3-ին ՀՀ կառավարության կողմից N 177-Ն որոշմամբ հաստատվել է ՄԵՎԱՆ ԼՃԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՏՈՒՄ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԶԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԻԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ-ը, որտեղ յուրաքանչյուր ռեկրեացոն գոտու	Միաժամանակ հայտի 13,6 կետում նախատեսվել են միջոցառումներ՝ ուղղված շինարարական աշխատանքների ընթացքում հնագիտական շերտերի հայտնաբերմանը:	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի պահանջները վերաբերվում է ՇՄԱԳ հաշվետվությանը: Ըսկ ներկայացվածը նախնական գնահատման հայտ է, որը կազմվել է նույն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին համապատասխան:

		համար նշված են մշակութային և հնագիտական հուշարձանների մասին տեղեկատվությունը: «Ծովագարդ» -ի լճամիսյա հատվածը, որտեղ տեղակայված է հանգստի գոտին նշված շերտերը բացակայում են:		
--	--	---	--	--

- Ներկայացված բոլոր հարցադրումներին պատասխանվել է, սակայն դիտողությունների հիմնական մասի հարցադրումները չեն համապատասխանում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին » ՀՀ օրենքով /16-րդ հոդվածի 4-րդ մասով/ սահմանված նախնական գնահատման հայտին ներկայացվող պահանջներին: